

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

2808 «ՀԱԳՈՒՍՏԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՆԱԽԱԳԾՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

«ՄՈԴԵԼԱՎՈՐՈՂ-ՆԱԽԱԳԾՈՂ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

ԵՐԵՎԱՆ 2012

1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ	4 ս.		72	54	18		36	36				
2	Տնտեսագիտության հիմունքներ	5 ս.		54	42	8	4			54			
3	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ	4 ս.		54	46		8	30	24				
4	Իրավունքի հիմունքներ	5 ս.		36	30		6			36			
5	Պատմություն	5 ս.		54	48		6	54					
6	Ռուսաց լեզու	3 ս.		72	12	60		36	36				
7	Օտար լեզու	4 ս.		72	14	58		36	36				
8	Ֆիզիկական կուլտուրա	4 ս.		140	8	132		32	22	24	22	24	16
9	Բնապահպանության հիմունքներ	4,6,8 ս.		36	30	6		36					
10	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր	3 ս.		18	16		2	18					
	ԸՆԴԱՄԵՆԸ			608				278	154	114	22	24	16
2.	ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ												
1	Համակարգչային օպերատորություն	4 ս.		72	12	60		36	36				
2	Աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ	4 ս.		54	40	14		54					
3	Անվտանգություն և առաջին օգնություն	4 ս.		72	50	22		46	26				
4	Հաղորդակցություն	4 ս.		54	24	30					54		
	ԸՆԴԱՄԵՆԸ			252									
3.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ												
1	Ընդհանուր գաղափար հազուստի մասին	4 ս.		36	30	6		36					
2	Նյութագիտություն (հազուստի նյութեր)	3 ս.		36	10	26		36					
3	Էսքիզային գրաֆիկա և կոմպոզիցիայի հիմունքներ	4 ս.		54	14	40		54					
4	Մարդու ֆիզուրայի համաչափությունների սխեմաների պատկերման հմտություններ	4 ս.		54	14	40			54				
5	Մարդու ֆիզուրայի պատկերման հմտություններ	5 ս.		54	10	44				54			
	ԸՆԴԱՄԵՆԸ			234				262	116	54	54		
4.	ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ												
1	Հազուստով ֆիզուրայի էսքիզների կատարման նկարչական հմտություններ	4 ս.		54	8	46				54			
2	Հազուստի հանգույցների մշակման հմտություններ: Ընդհանուր կարողություններ	5 ս.		54	20	34					54		
3	Կարի մեքենասարքավորումների օգտագործման և ձեռքի կարատեսակներ կատարելու հմտություններ	5 ս.		54	14	40					54		
4	Հազուստի մոդելավորում և գեղարվեստական ձևավորում: Ներածություն	3 ս.		36	26	10					36		
5	Հազուստի տարբեր տեսակների մոդելավորման և	6 ս.		72	12	60					36	36	

	զեղարվեստական ձևավորման հմտություններ: Հազուստի հավաքածու													
6	Հազուստի նախագծման հմտություններ	6 տ.		72	12	60			72					
7	Հազուստի հիմքի գծագրի կառուցման հմտություններ	6 տ.		54	14	40			54					
8	Հազուստի մոդելավորման և նախագծման հմտություններ՝ կանացի կիսաշրջագգեստ	5 տ.		54	14	40							54	
9	Հազուստի մոդելավորման և նախագծման հմտություններ՝ անդրավարտիքներ՝ կանացի և տղամարդու	7 տ.		72	12	60				72				
10	Հազուստի մոդելավորման և նախագծման հմտություններ՝ մանկական անդրավարտիք	7 տ.		72	12	60				72				
11	Հազուստի մոդելավորման և նախագծման հմտություններ՝ կանացի շրջագգեստ և բլուզ	7 տ.		54	14	40							54	
12	Հազուստի մոդելավորման և նախագծման հմտություններ՝ տղամարդու վերնաշապիկ	6 տ.		36	6	30							36	
13	Հազուստի մոդելավորման և նախագծման հմտություններ՝ մանկական շրջագգեստ և կիսաշրջագգեստ	6 տ.		54	14	40							54	
14	Հազուստի մոդելավորման և նախագծման հմտություններ՝ մանկական վերնաշապիկ	6 տ.		36	6	30								36
15	Հազուստի մոդելավորման և նախագծման հմտություններ՝ մանկական պիջակ և բաճկոն	8 տ.		90	20	70								90
16	Տրիկոտաժեղենի մոդելավորում և նախագծում	7 տ.		54	14	40							54	
17	Մոդելի տեխնիկական փաստաթղթերը	8 տ.		18	2	16								18
18	Ազգային տարագ	8 տ.		36	16	20								36
19	AUTOCAD	7 տ.		54	14	40						54		
20	Հազուստի համակարգչային նախագծում	7 տ.		54	14	40							54	
21	Հազուստի ոճեր	6 տ.		36	16	20								36
22	Հազուստի մոդելավորում մուլյաժային եղանակով	8 տ.		36	6	30								36
23	Գործվածքի զարդարարական նախշապատում	6 տ.		18	2	16								18
	ԸՆԴԱՄԵՆԸ			1170	272	898			126	198	234	342	270	
	ԸՆՏՐՈՎԻ			144				36		36	36	36		
	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ			112						30	50	30	2	
	ԸՆԴԱՄԵՆԸ			2520				576	396	432	396	432	288	
	ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ			300										
	ՇԱԲԱԹՎԱ ԺԱՄԵՐԻ ՔԱՆԱԿԸ							36	36	36	36	36	36	

IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ			№	VII. ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՇԵՍԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ	
1	Նկարչական նյութերի տեխնոլոգիա			ԿԱԲԻՆԵՏՆԵՐ	
2	Adobe Photoshop, Corel Drow		1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի	
3	Արվեստի պատմություն		2	Օտար լեզուների	
4	Նորաձևության պատմություն		3	Կրոնի և հայոց պատմության	
			4	Ընդհանուր բնագիտական առարկաների	
			5	Ֆիզիկական կուլտուրայի	
			6	Ընդհանուր մասնագիտական	
				ա. Գծագրության և նկարչության	
				բ. Նյութագիտության	
				գ. Էսքիզային գրաֆիկայի և կոմպոզիցիայի	
			7	Հատուկ մասնագիտական	
				ա. Հագուստի մոդելավորման և գեղարվեստական ձևավորման	
				բ. Հագուստի պատրաստման տեխնոլոգիայի և սարքավորումների	
				գ. Հագուստի նախագծման	
				դ. Հագուստի ոճերի և ազգային տարազի	
				ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ	
			1	Էկոլոգիայի և աշխատանքի պաշտպանության	
			2	Նյութերի փորձարկման	
	V. ՊՐԱԿՏԻԿԱ	Կիսամյակ	Շաբաթ	3	Համակարգչային
1	Ուսումնական պրակտիկա՝ առանց տեսական ուսուցման	4, 5, 6	12, 4, 12		ԱՐՇԵՍԱՆՈՑՆԵՐ
2	Արտադրական պրակտիկա	7, 8	5, 7		
3	Նախաավարտական պրակտիկա	8	3	1	Կարածոների տեխնոլոգիայի
		ԸՆԴԱՄԵՆԸ			ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ
VI. ՌԻՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ				1	Մարզադահլիճ
Բոլոր ուսանողները կատարում են ավարտական աշխատանք Հունիսի 22-ից 28-ը շրջանում.				2	Մարզահրապարակ

VIII. ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

- Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, հաստատության ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների /մոդուլների/ ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի /մոդուլի/ համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների /մոդուլների/ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
- Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի ,ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների /մոդուլների/ գծով ուսումնական պարապմունքների, կուրսային աշխատանքի նախագծման և արհեստանոցներում գործնական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի /մոդուլի/ յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների /մոդուլների/ տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է քոլեջի խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:
- Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը, բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է քոլեջը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է քոլեջի ուսումնամեթոդական խորհուրդը:

4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը: Ամանորի և Սուրբ ծննդի տոների շաբաթը քոլեջը հաշվի է առնում յուրաքանչյուր տարվա աշխատանքային ժամանակացույցը կազմելիս:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է քոլեջը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով ուսումնական պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Քոլեջը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

Աղյուսակ 1

Միջին մասնագիտական կրթության 2808 <<Հագուստի մոդելավորում և նախագծում>> մասնագիտության հիմնական կրթական ծրագրի առանցքային հմտությունների մոդուլներ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՀ-ՀՕՀ-5-12-001
Մոդուլի նպատակը	Զարգացնել սովորողի համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա ծրագրային հնարավորությունները կիրառելու առաջնային կարողությունները, աշխատանքային գործունեության ընթացքում և անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային օպերացիոն համակարգերի, գրասենյակային փաթեթների (Microsoft Office) ծրագրերերը, կատարելագործել համացանցից օգտվելու կարողությունները և տեղեկատվական բազաների հետ նպատակային աշխատելու հմտությունները
Մոդուլի տևողությունը	72 ժամ Տեսական ուսուցում՝ 14 ժամ Գործնական աշխատանք՝ 58 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. ա. տիրապետի համակարգչային տեխնիկային և կիրառի օպերացիոն համակարգը, բ. խմբագրի և ֆորմատավորի տեքստերը, գ. պատրաստի և խմբագրի աղյուսակները, դ. կատարի գրաֆիկական խմբագրում և նկարագարում, ե. կազմակերպի ցուցադրություն համակարգչային ծրագրերով, զ. աշխատի համացանցում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Համակարգչային տեխնիկայի տիրապետում և օպերացիոն համակարգի կիրառում
Կատարման չափանիշներ	1) տիրապետում է համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչներին, 2) տիրապետում է միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պայմաններին, 3) տիրապետում է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերին (printer, scanner, projector, fax, պատճենման սարք և

	<p>այլն),</p> <p>4) ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը,</p> <p>5) ներկայացնում է կիրառվող հիմնական ծրագրերը (microsoft office),</p> <p>6) կարողանում է բացել առաջադրված թղթապանակը և ֆայլը,</p> <p>7) օգտվում է պատուհանային մենյուի հիմնական հրամաններից,</p> <p>8) ստեղծում է նոր թղթապանակ ու ֆայլ, պահպանում, բացում, փակում և տեղադրում է առաջադրված վայրում</p> <p>9) կատարում է առաջադրված փաստաթղթի տպագրում (Print)</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով:</p> <p>Ուսանողին կտրվեն հարցեր համակարգի հիմնական և լրացուցիչ բաղադրիչների, օժանդակ տեխնիկական սարքերի, դրանց կիրառման և նշանակության մասին: Կհանձնարարվի միացնել համակարգիչը և դրան կից օժանդակ տեխնիկական սարքերը, օգտագործել ծրագրային հնարավորությունները՝ համաձայն առաջադրանքի: Ուսանողին կառաջադրվեն առնվազն 3 հիմնական ծրագրում կատարել նույն գործողությունը. թղթապանակ և ֆայլ բացելու, պատուհանային մենյույի հիմնական հրամաններից օգտվելու, ստեղծված ֆայլը պահպանելու, փակելու, առաջադրված վայրում տեղադրելու և տպագրելու գործողություն:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր, համակարգչային օժանդակ տեխնիկական սարքեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>16 ժամ</p> <p>Տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>Գործնական աշխատանք՝ 12 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	Տեքստերի խմբագրում և ֆորմատավորում
Կատարման չափանիշներ	<p>1) կարողանում է ծրագրերը պատրաստել հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար,</p> <p>2) մուտքագրում է տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ,</p> <p>3) կարողանում է տեղաշարժել տեքստային ցուցիչը տեքստի մեջ կատարելով ուղղումներ, ջնջումներ, լրացումներ,</p> <p>4) կատարում է մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում՝ փոխելով տողերի դասավորությունը, միջտողային տարածությունները, տեքստի գունային ֆոնը, պարբերության խորությունները լուսանցքներից,</p> <p>5) կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անիմացիաներ և այլն:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի տեքստեր մուտքագրելու, ձևավորելու, խմբագրելու տեքստը հավելելու գործողություններ՝ առնվազն 3 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>14 ժամ</p> <p>Տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>Գործնական աշխատանք՝ 12 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	Աղյուսակների պատրաստում և խմբագրում

Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է աղյուսակներ կազմելու համապատասխան ծրագրերը և նախապատրաստում դրանք, 2) կազմում է աղյուսակ առաջադրված չափերով և մուտքագրում տվյալներ, 3) կատարում է ուղղումներ ու լրացումներ աղյուսակում (տվյալներ, տողեր, սյուներ և այլն), 4) փնտրում և գտնում է տվյալներ աղյուսակում, 5) ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն տվյալների մեջ:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի աղյուսակ կազմելու, ձևավորելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, աղյուսակային տվյալները հավելելու և տվյալների ֆունկցիոնալ կախվածություն ստեղծելու գործողություններ՝ առնվազն 2 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը: Ֆունկցիոնալ կախվածության օրինակ կարող է հանդիսանալ թվաբանական գործողությունների ամփոփումը, վերափոխումը (օրինակ՝ տոկոսի վերածելը) և այլն:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>14 ժամ Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 4	Գրաֆիկական խմբագրում և նկարազարդում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ, 2) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autosshapes պատուհանի պատրաստի ձևերը, 3) գծագրում է կանոնավոր պատկերներ, 4) ֆորմատավորում է գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով և չափերը փոխելով, 5) խմբավորում է գրաֆիկական օբյեկտները, 6) գծագրում է տեքստային բլոկներ, 7) կատարում է գրաֆիկական օբյեկտների գունաբերանգավորում:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի գրաֆիկական օբյեկտներ, կանոնավոր պատկերներ, տեքստային բլոկներ գծագրելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, խմբավորելու, ձևավորելու գործողություններ՝ առնվազն 3 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>12 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 5	Ցուցադրության կազմակերպում համակարգչային ծրագրերով
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է ցուցադրական ծրագրերը և դրանց պատուհանի կառուցվածքը, 2) մուտքագրում է տեքստ, թվային արժեքներ և կատարում պարզ գործողություններ,

	<p>3) ներբեռնում է նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով, 4) կարողանում է առաջադրված թեմայով պատրաստել ավարտուն փաստաթուղթ ցուցադրության համար, 5) ցուցադրում է պատրաստված տեղեկատվական նյութը:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի օգտվելով պատուհանային կառուցվածքից նախապատրաստել ցուցադրական ծրագիրը՝ թվային և տեքստային տվյալներ մուտքագրելու, խմբագրելու, նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, աղյուսակային և գրաֆիկական տվյալներ ներբեռնելու, ձևավորելու գործողություններ՝ առնվազն 2 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը:</p> <p>Կառաջադրվի ազատ թեմայի ներկայացման համար պատրաստել ցուցադրություն և ներկայացնել՝ պահպանելով թեմայի տրամաբանական կապն ու հաջորդականությունը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>10 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 6	Աշխատել համացանցում
Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է «համացանց» հասկացությունը, 2) օգտագործում է ինտերնետային հիմնական ծրագրերը, 3) ներկայացնում է History, Favorites, Stop, Refresh հրամանների, Back և Forward կոճակների նշանակությունը, 4) փնտրում է առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում (որոնողական և բաց ցանցերից), 5) կարողանում է համացանցից ներբեռնել, պահպանել և օգտագործել տեղեկությունները, 6) գրանցվում է էլեկտրոնային փոստում, ինտերնետային ծրագրերում և այլ կայքերում, 7) օգտագործում է էլեկտրոնային փոստի հնարավորությունները, ուղարկում և ստանում ինֆորմացի (հաղորդագրություն, նամակ և կցորդ):</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել համացանցի կառուցվածք, օգտագործման նպատակների բազմազանությունը, համացանցի միջոցով կարգավորման ենթա հնարավոր հարցերը: Ուսանողին կհանձնարարվի մուտք գործել ինտերնետային ծրագիր՝ փնտրել առաջադրված տվյալները, ներբեռնել, օգտագործել և պահպանել տվյալներ: Կառաջադրվի որոշակի տեղեկատվություն փոխանցել սոցիալական կայքերի միջոցով կամ բաշխել ըստ հասցեականության:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>6 ժամ Տեսական ուսուցում՝ 0 ժամ Գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՀ -ԱԳԸՀ -5-12-001

Մոդուլի նպատակը	Մոդուլը նպատակաուղղված է աշխատանքային հիմնական իրավահարաբերությունների մասին իրազեկվածության բարձրացմանը, աշխատանք փնտրելու և գտնելու կարողությունների զարգացմանը, աշխատանքային գործունեության ընդհանուր կարողությունների և հմտությունների ձևավորմանը, ընթացիկ հաջողության հասնելու նախապայմանների ստեղծմանը, ինչպես նաև ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու կարողությունների, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողությունների ձևավորմանը:
Մոդուլի տևողությունը	54 ժամ Տեսական ուսուցում՝ 18 ժամ Գործնական աշխատանք՝ 36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. փնտրի և գտնի աշխատանք, 2. հարմարվի աշխատանքային միջավայրին, ապահովի աշխատանքային դրական մթնոլորտ, 3. արդյունավետ աշխատի թիմում՝ պահպանելով էթիկայի նորմերը, 4. ներկայացնի աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Փնտրել և գտնել աշխատանք
Կատարման չափանիշներ	ա. ներկայացնում է աշխատանքային իրավահարաբերությունների ձևավորման նախապայմանները, բ. կարողանում է փնտրել առկա աշխատատեղերի բազան, ուսումնասիրել և ընտրել հավանական աշխատատեղը (երը)՝ օգտագործելով աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները, գ. ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV), դ. ներկայացնում է իր մասնագիտական ուժեղ կողմերը և հիմնավորում իր համապատասխանությունը, ե. ներկայացնում է աշխատանքի ընդունվելու, աշխատանքի փոփոխության և աշխատանքից ազատվելու հիմնական ընթացակարգերը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատանքային իրավահարաբերություններ ծագման հիմքերի, կողմերի իրավունիքների և պարտականությունների, պայմանագրային հարաբերություններ ձևավորելու նախապայմանների, աշխատանքի ընդունվելու, աշխատանքի փոփոխության և աշխատանքից ազատվելու հիմնական ընթացակարգերի վերաբերյալ: Կհանձնարարվի փնտրել ուսանողի ապագա որակավորմանը համապատասխան հավանական աշխատատեղ(եր)՝ օգտվելով տարբեր բազաներից, վերլուծել հավաքագրված տվյալները և պլանավորել աշխատանքի ընդունվելու իր գործողությունները: Կառաջադրվի դերային խաղ, որի ընթացքում ուսանողը կկազմի ինքնակենսագրություն (CV) և կներկայացնի իր մասնագիտական ուժեղ կողմերը, կարող է հիմնավորել և լինել համոզիչ՝ տվյալ աշխատատեղում իր համապատասխանության հարցում: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում է բոլոր հանձնարարությունները և առաջադրանքները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքային իրավահարաբերությունների վերաբերյալ նորմատիվ ակտեր (աշխատանքային օրենսգրքը, պայմանագրեր և այլն), տեղեկատվական բազաներ (համակարգիչ, բուկլետներ և այլն), մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 6 ժամ Գործնական աշխատանք՝ 10 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Հարմարվել աշխատանքային միջավայրին, ապահովել աշխատանքային դրական մթնոլորտ
Կատարման չափանիշներ	ա. ներկայացնում է մասնագիտական գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող հիմնական պահանջները, բ. հիմնավորում է տվյալ աշխատանքով զբաղվելու իր պատրաստակամությունը և տրամադրվածությունը, գ. ներկայացնում է գործընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետ հաղորդակցվելու օրինակներ, դ. առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատրաստակամություն և պատասխանատվության դրսևորումներ, ե. ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու կարողություններ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատանքային կարգապահության, աշխատավայրի կառուցվածքի և ստորաբաժանումների, աշխատավայրի տեխնիկական պայմանների և աշխատանքային գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող այլ պահանջների վերաբերյալ: Կստեղծվի աշխատանքային պայմանական իրավիճակ, որի ընթացքում «նորանշանակ աշխատողը» պետք է կարողանա ցուցաբերել արդյունավետ հաղորդակցման կարողություն, շփվել գործընկերային միջավայրում, հաղթահարել տարբեր տրամադրվածություններ, որով հնարավոր կլինի գնահատել նոր աշխատակցի պատրաստակամությունը և պատասխանատվության զգացումը: Նշված իրավիճակում դիտարկվում է նաև ուսանողի ուշադիր լսելու և հասկանալու կարողությունները: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքային իրավահարաբերությունների և կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Արդյունավետ աշխատել թիմում՝ պահպանելով էթիկայի նորմերը
Կատարման չափանիշներ	ա. ներկայացնում է կազմակերպության նպատակները և դրա իրականացման գործում թիմային աշխատանքի և միջանձնային հարաբերությունների կարևորությունը, բ. ներկայացնում է թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները և խնդիրների լուծման մեթոդները, գ. դրսևորում է հարգալից և պատշաճ վերաբերմունք գործընկերների նկատմամբ՝ ըստ նրանց վարքագծի դրսևորման, ե. առաջադրում է լուծումներ գործընկերների շրջանում առաջացած խնդրահարույց իրավիճակներում, զ. կարողանում է առանձին իրավիճակներում գերադասել թիմային շահը անձնական շահից:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր կազմակերպության և թիմային նպատակի սահմանման, թիմային աշխատանքի հիմնական սկզբունքների և խնդիրների լուծման մեթոդների վերաբերյալ: Կստեղծվի աշխատանքային պայմանական իրավիճակ, որի ընթացքում ուսանողը, որպես աշխատակից, պետք է կողմնորոշվի աշխատանքային պարզ հարաբերություններում առաջացած բարեկամական կամ վիճահարույց իրավիճակներում՝ պահպանելով պատշաճությունը և հարգալից տոնը: Կառաջադրվի դերային խաղ, որի ընթացքում գործընկերների վարքագծերի տարբեր դրսևորումների պայմաններում ուսանողը առաջադրում է թիմային շահից ելնող լուծումներ: Վարքագծային դրսևորումների օրինակներ կարող են հանդիսանալ անձնական անհագալից վերաբերմունքը, աշխատանքային պարտականությունների կատարման թերացումները կամ

	անտարբերությունները, անձնական հատկանիշների գերադրում կամ ստորադասում, թիմային զգացողության բացասական գերակայությունը և այլն: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մշակված նյութեր և իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները
Կատարման չափանիշներ	ա. բացատրում է աշխատանքային կարգապահության և պատասխանատվության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում, բ. բացատրում է մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում, գ. բացատրում է նախաձեռնողականության և նպատակասլացության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում, դ. ներկայացնում է աշխատանքային գործունեության ընթացքում ստորադասության և վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորությունը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատանքային գործունեության ընթացքում կարգապահության, պատասխանատվության, մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման, նախաձեռնողականության և նպատակասլացության, ստորադասության և վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորության վերաբերյալ: Վարվելակերպի նշված կետերի կարևորության ընկալումը կդիտարկվի ուսանողի մոտ նաև գործնականում՝ ուսուցման գործընթացում: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում բոլոր հանձնարարությունները և դրսևորում է պատասխանատու վերաբերմունք ուսուցման գործընթացի նկատմամբ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական աշխատանք՝ 10 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱԱՕ-5-12-001
Մոդուլի նպատակը	Սովորողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում՝ անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ Տեսական ուսուցում՝ 32 ժամ Գործնական աշխատանք՝ 40 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.

	<ol style="list-style-type: none"> 1. ներկայացնի աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները, 2. կազմակերպի կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան, 3. կանխի հավանական վտանգները և վթարները, իրականացնի անվտանգության միջոցառումներ, 4. ցուցաբերի առաջին օգնություն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը,</p> <p>բ. ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում էլեկտրասանվտանգության կանոնները,</p> <p>է. ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի միջոցով:</p> <p>Ուսանողին կտրվեն հարցեր անվտանգության հիմնական կանոնների, պահպանման անհրաժեշտության և չափանիշների դեպքում դրանց հետևանքների վերաբերյալ: Կհանձնարարվի որոշակի բնագավառի (աշխատավայրի) համար ներկայացնել անվտանգության կանոնների առանձնահատկությունները, համեմատել առնվազն երկու բնագավառ:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <ol style="list-style-type: none"> 1. անվտանգության հիմնական կանոնները՝ ըստ տարբեր մասնագիտական աշխատատեղերի, 2. տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը, 3. հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը, 4. էլեկտրասանվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը: 5. կենցաղային հիմնական սարքերի անվտանգության կանոնները: <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	20 ժամ տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Կազմակերպել կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան
Կատարման չափանիշներ	<p>ա. ներկայացնում է մարդու առողջության և աշխատանքի ընթացքում աշխատունակության վրա ազդող գործոնները, (սանիտարահիգիենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական, սոցիալական-հոգեբանական),</p> <p>բ. ներկայացնում է աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման, ճառագայթումը, լուսավորվածությունը, տատանումները և այլն),</p> <p>գ. ներկայացնում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց անվնաս օգտագործումը,</p> <p>դ. ներկայացնում է սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները:</p>

Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով:</p> <p>Ուսանողին կտրվեն հարցեր աշխատունակության վրա ազդող գործոնների, սանիտարահիգիենիկ նորմերի և դրանց պահպանման պահանջների վերաբերյալ: Կհանձնարարվի ներկայացնել որոշակի, կոնկրետ իրավիճակից բխող սանիտարիայի և հիգիենայի պահպանման, ինչպես նաև անհրաժեշտ աշխատանքային կամ կենցաղային նյութերի անվնաս օգտագործմանն ուղղված միջոցառումներ:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>16 ժամ Տեսական ուսուցում՝ 8 ժամ Գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	<p>Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ</p>
Կատարման չափանիշներ	<p>ա. ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները, բ. ներկայացնում է արտադրական վթարների կանխման աշխատանքները, գ. ներկայացնում է առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ և այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները, դ. ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով:</p> <p>Ուսանողին կտրվեն հարցեր կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառների ու հետևանքների, դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ: Կհանձնարարվի ներկայացնել որոշակի խմբերի համար սահմանված աշխատանքային պայմանների ապահովման և կոնկրետ վտանգի կանխարգելմանն ուղղված միջոցառումներ: Կառաջադրվի կոնկրետ կենցաղային վթարի կամ պատահարի համար ներկայացնել փաստաթղթային ձևակերպումներ բաղադրիչները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>16 ժամ Տեսական ուսուցում՝ 8 ժամ Գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 4	<p>Ցուցաբերել առաջին օգնություն</p>
Կատարման չափանիշներ	<p>ա. տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին, բ. ճիշտ է ներկայացնում առաջին օգնության գործողությունների քայլերը, գ. կատարում է արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողություն, գ. կատարում է արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողություն, դ. կատարում է այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողություններ, ե. կատարում է վիրակապման և անշարժացման գործողություն՝ տարբեր կոտրվածքների դեպքում,</p>

	գ. ներկայացնում է տարբեր թունավորման դեպքերում առաջին օգնության կազմակերպման գործողությունները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր առաջին օգնության հիմնական կանոնների և գործողությունների վերաբերյալ: Կհանձնարարվի ցուցադրել (անհնարինության դեպքում՝ նկարագրել) առաջին օգնության գործողություններ՝ ըստ դեպքերի: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր, մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը, նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ, առաջին օգնության համար անհրաժեշտ միջոցներ, նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	20 ժամ տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՀ -Հ -5-12-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունը:
Մոդուլի տևողությունը	54 ժամ Տեսական ուսուցում՝ 24 ժամ Գործնական աշխատանք՝ 30 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ներկայացնի հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար, 2. կիրառի ուղղակի հաղորդակցման ձևերը, 3. կիրառի անուղղակի հաղորդակցման ձևերը, 4. ձևավորի և զարգացնի միջանձնային հաղորդակցում, 5. խթանի համագործակցության ձևավորմանը, շարունակական գործընկերության համար ստեղծի նախապայմաններ:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունը անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների համար, բ. ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերը, բաղադրիչները, գ. ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակները, բաղադրիչները, դ. շփման հնարավորությունը ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը,

	<p>ե. անձնական հատկանիշները օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անձնական հաղորդակցման և շփման ձևերի, գործնական հաղորդակցման եղանակների ու դրանց բաղադրիչների վերաբերյալ: Կառաջադրվեն իրավիճակային խնդիրներ՝ նպատակային հաղորդակցման հնարավորությունները բացահայտելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և առաջադրված իրավիճակում օգտագործում է հնարավորությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>12 ժամ Տեսական ուսուցում՝ 6 ժամ Գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը, բ. բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին, գ. հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք, դ. ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ, հաճոյախոսում է, ե. մասնակցում է դեբատների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր ուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, հանձնարարվում է որոշակի թեմայի շուրջ զեկույց և հաղորդում պատրաստել, առաջադրվում է թեմատիկ քննարկումներ, որի ընթացքում ուսանողը հանդես է գալիս հնարավոր բոլոր դրսևորումներով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, խոսքը կառուցում է հստակ և նպատակային, կարողանում է արձագանքել ըստ իրավիճակի:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>10 ժամ Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը
Կատարման չափանիշներ	<p>ա.ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը, բ. կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան, գ. օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները՝ նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար, դ. կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի, ե.վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր,</p>

	<p>գ. բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի, է. գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, կհանձնարարվի որոշակի թեմայի շուրջ կազմել տեքստ՝ հաշվի առնելով հասցեատիրոջը, կառաջադրվի թեմա, որի վերաբերյալ տարբեր աղբյուրներից հավաքագրվում, ամբողջացվում և փոխանցվում է տեղեկատվությունը, կհանձնարվի բանավոր հակիրճ միտքը վերածել գրավոր ամբողջական տեքստի, իսկ ամբողջական ծավալուն տեքստից առանձնացնել առաջնային ինֆորմացիան և ներկայացնել հակիրճ խոսքով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և 80% ճշգրտությամբ կատարում է հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>8 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 4	Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում
Կատարման չափանիշներ	<p>ա. նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և զրուցակցի կամ հաստեատիրոջ, բ. ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը, գ. առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար, դ. օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար, ե. ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ, զ. պահպանում և եզրափակում է երկխոսությունը, դ. կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի գործնական աշխատանքներ որոշակի տեղեկատվություն ստանալու, մշակելու և դասակարգելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ անձնական շփում նախաձեռնելու, երկխոսության կողմ լինելու, զրույցը պահպանելու և եզրափակելու կարողությունները դիտարկելու, գնահատելու համար: Նույն առաջադրանքը կհանձնարարվի աշխատանքային շփումների համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>12 ժամ Տեսական ուսուցում՝ 6 ժամ Գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 5	Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար

Կատարման չափանիշներ	<p>ա. ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումներ (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն),</p> <p>բ. հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվությունը,</p> <p>գ. հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար,</p> <p>դ. օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,</p> <p>ե. հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն,</p> <p>զ. ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Թեստերի միջոցով ստուգվում է համագործակցությունը խթանող միջոցառումների իմացությունը, և կոնկրետ դեպքերի համար դրանց կիրառման առավել նպաստավոր տարբերակները: Կհանձնարարվի հավաքագրել որոշակի գործընկերոջ վերաբերյալ տեղեկատվություն և օգտագործել գործարար հաղորդակցում ձևավորելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ գործնական հաղորդակցում նախաձեռնելու, համագործակցության հասնելու և հետադարձ կապ ապահովելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր, մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը, նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>12 ժամ</p> <p>Տեսական ուսուցում՝ 6 ժամ</p> <p>Գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՂԱՓԱՐ ՀԱԳՈՒՍԻ ՄԱՍԻՆ»	
Մոդուլի դասիչը	ՀՄՆ-5-12-001
Մոդուլի նպատակը	<p>Մոդուլը մշակվել է ուսանողների մոտ հազուստի նշանակության, տեսականու, ֆունկցիաների, դասակարգման մասին ընդհանուր գաղափար ձևավորելու, ինչպես նաև ծանոթացնելու հազուստին ներկայացվող սպառողական և արտադրական պահանջների հետ:</p>
Մոդուլի տևողությունը	<p>36 ժամ</p> <p>Տեսական ուսուցում՝ 30 ժամ</p> <p>Գործնական պարապմունք՝ 6 ժամ</p>
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.</p> <ol style="list-style-type: none"> 1. պատկերացում ձևավորի հազուստի հիմնական ֆունկցիաների, դասակարգման և հազուստին ներկայացվող պահանջների վերաբերյալ, 2. ձևավորի հազուստին ներկայացվող սպառողական և արտադրական պահանջների դասակարգման կարողություններ, 3. ձևավորի տարբեր տարիքի մանկական հազուստի տեսակային խմբերի և նրանց ներկայացվող պահանջների դասակարգման կարողություններ:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Պատկերացում ձևավորել հազուստի հիմնական ֆունկցիաների, դասակարգման և հազուստին ներկայացվող

	պահանջների վերաբերյալ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է պատկերացնում հազուատի կիրառական և էսթետիկա-ինֆորմացիոն ֆունկցիաները, բ. ճիշտ է դասակարգում հազուատը ըստ խմբերի, ենթախմբերի, ձևերի, տեսականու:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և թեստի արդյունքների հիման վրա: Ուսանողին տրվելու են հազուատին ներկայացվող պահանջների, հազուատի դասակարգման խմբերի և տեսականու մասին: Թեստը պարունակելու է հարցեր հազուատի սեռահասակային խմբերի առանձնահատկությունների վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. – հազուատի սպառողական պահանջները, – համապատասխանությունը նորաձևությանը, – շուկայի պահանջները: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին, պատկերացնում է սպառողի և արտադրողի փոխշահավետ համագործակցության կարևորությունը և խնդիրները: Թույլատրվում են ոչ էական բացթողումներ և վրիպումներ պատասխանների մեջ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է հիմնականում տեսական, փոքր մասով՝ գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ հազուատի վերաբերյալ ալբոմներ, նկարչական էսքիզներ: Ուսուցումը կատարվում է մասնագիտական կաբինետներում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	14 ժամ Տեսական ուսուցում՝ 12 ժամ Գործնական պարապմունք՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ձևավորել հազուատին ներկայացվող սպառողական և արտադրական պահանջների դասակարգման կարողություններ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է պատկերացնում հազուատին ներկայացվող սպառողական պահանջները, բ. ճիշտ է թվարկում հազուատին ներկայացվող արտադրական պահանջները, գ. կոնկրետ օրինակների վրա կարողանում է հիմնավորել վերը նշված պահանջները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողին տրվելու են հազուատի սպառողական և արտադրական պահանջների վերաբերյալ հարցեր: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. – հազուատին ներկայացվող հիգիենիկ պահանջները, – հազուատին ներկայացվող էսթետիկական պահանջները, – սպառողի տնտեսական շահագրգռվածությունը: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա թվարկված հարցերը ճիշտ է պատկերացնում:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է հիմնականում տեսական պարապմունքների և իլյուստրացիաների միջոցով: Անհրաժեշտ են տարբեր տիպի հազուատների նմուշներ, գործվածքի մեծ տեսականի:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	12 ժամ Տեսական ուսուցում՝ 10 ժամ Գործնական պարապմունք՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ձևավորել տարբեր տարիքի մանկական հազուատի տեսակային խմբերի և նրանց ներկայացվող պահանջների դասակարգման կարողություններ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է պատկերացնում տարբեր տարիքի մանկական հազուատի տեսակային խմբերը, բ. կարողանում է դասակարգել մանկական հազուատին ներկայացվող պահանջները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և տնային առաջադրանքների ստուգման հիման վրա:

	Ուսանողին տրվում են հարցեր մանկական հագուստի տեսականու և դասակարգման վերաբերյալ: Ստուգվում է ընթացքում տրված առաջադրանքների կատարումը: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է պատրաստել նմուշը և կարողանում է հիմնավորել մանկական հագուստին ներկայացվող պահանջները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական հանձնարարությունների միջոցով: Անհարժեշտ է ստուգումը կատարել կարի ուսումնասիրտադրական արհեստանոցում, որտեղ կա մանկական հագուստի հարուստ տեսականի:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	10 ժամ Տեսական ուսուցում՝ 8 ժամ Գործնական պարապմունք՝ 2 ժամ
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՆՅՈՒԹԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (ՀԱԳՈՒՍՏԻ ՆՅՈՒԹԵՐ)»	
Մոդուլի դասիչը	ՀՄՆ-5-12-002
Մոդուլի նպատակը	Ուսանողին տալ գիտելիքներ գործվածքների մանրաթելային կազմի, կառուցվածքի և հատկությունների մասին, նրանց մոտ ձևավորել հմտություններ և կարողություններ արտադրական պրոցեսի համար ընտրելու հիմնական, լրացուցիչ և կոմպլեքս նյութեր, համապատասխան տրիկոտաժե պաստառներ և թաղանթանյութեր:
Մոդուլի տևողությունը	36 ժամ Տեսական ուսուցում՝ 10 ժամ Գործնական պարապմունք՝ 26 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը յուրացնելու համար մուտքային գիտելիքներ չեն պահանջվում:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ձևավորի կարի արտադրությունում օգտագործվող նյութերի, նրանց կառուցվածքի, հատկությունների և տեսականու իմացություն և դրանց տարբերակման կարողություն, 2. ձևավորի գործվածքների ստացման /գործվածքային պրոցեսի/ իմացություն և գործընթացի գնահատման կարողություն, 3. ձևավորի տրիկոտաժե պաստառների առանձնահատկությունների որոշման կարողություն, 4. ձևավորի գործվածքների և կարի արտադրությունում օգտագործվող նյութերի տեսակների դասակարգման կարողություն, 5. ձևավորի գործվածքի բնութագիրն ըստ նշանակության որոշելու և կազմելու կարողություն
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ձևավորել կարի արտադրությունում օգտագործվող նյութերի, նրանց կառուցվածքի, հատկությունների և տեսականու իմացություն և դրանց տարբերակման կարողություն
Կատարման չափանիշներ	ա. տարբերակում է բնական և քիմիական մանրաթելերի հատկությունները, բ. կարողանում է օրգանոլեպտիկ եղանակով որոշել բնական և քիմիական մանրաթելերի հատկությունները, գ. կարողանում է որոշել մանվածքի և թելի կառուցվածքը, ոլորքների թիվը, ձևը, հարդարման տեսակը, դ. կարողանում է որոշել մանրաթելերի կազմը և մանելու ձևը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստի գնահատման հիման վրա: Ուսանողին տրվելու են հարցեր կարի արտադրությունում օգտագործվող նյութերի առանձնահատկությունների մասին, թեստում ընդգրկվելու են հարցեր այդ նյութերի տարբերակման կարողությունները և օգտագործման բնագավառները բացահայտելու ուղղությամբ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են: – հիմնական նյութերի կառուցվածք, – օժանդակ նյութերի կառուցվածք,

	<p>– ըստ ասորտիմենտի (տեսականու) օգտագործվող նյութերի կառուցվածքի իմացության և տարբերական կարողություն:</p> <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե պատասխաններում ուսանողը էական բացթողումներ չի տալիս, ճիշտ է թվարկում բնական և քիմիական մանրաթելերի հատկությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի յուրացումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական պարապմունքների ընթացքում: Անհրաժեշտ է փորձարկման լաբորատորիայում ստուգել բնական և քիմիական մանրաթելերի հատկությունները: Անհրաժեշտության դեպքում հարկ կլինի օգտագործել որևէ հանրակրթական դպրոցի քիմիայի լաբորատորիան կամ որևէ ձեռնարկության բազան:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	8 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ձևավորել գործվածքների ստացման (գործվածքային պրոցեսի) իմացություն և գործընթացի գնահատման կարողություն
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է բացատրում մանրաթելերը գործելուն նախապատրաստելու կարգը և հաջորդականությունը,</p> <p>բ. ճիշտ է որոշում գործվածքների արտադրության պատճառները, որոշում գործվածքի ուղիղ և հակառակ կողմերը,</p> <p>գ. ճիշտ է կատարում գործվածքների ռապորտը /հյուսվածք/ և գնահատում պաստառի որակը,</p> <p>դ. ճիշտ է տեսակավորում գործվածքների պաստառները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողին տրվելու են հարցեր գործվածքային պաստառի որակի և հյուսման գործընթացի վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> – օգտագործվող մանրաթելերի որակի և տեսականու իմացություն, – հաստոցների տեխնիկական սպասարկումը, – գործվածքային պաստառի հնարավոր թերությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և արտադրական պրոցեսների դիտարկման ընթացքում: Անհրաժեշտ է այցելել որևէ արտադրական ձեռնարկության գործվածքային արտադրամաս:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	6 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ձևավորել տրիկոտաժե պաստառների առանձնահատկությունների որոշման կարողություն
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է նշում տրիկոտաժի և պաստառների և գործվածքի տարբերությունները,</p> <p>բ. գիտի տրիկոտաժի պաստառի հյուսման սկզբունքները,</p> <p>գ. ճիշտ է սորտավորում տրիկոտաժի պաստառները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, տրիկոտաժե պաստառների նմուշների համադրման միջոցով:</p> <p>Ուսանողին տրվելու են հարցեր յուրաքանչյուր նմուշի առանձնահատկությունների վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> – օգտագործվող մանրաթելերի հատկությունները, – հյուսվածքի ձևերի բազմազանությունը
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և պաստառների տեսականու ուսումնասիրման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ պաստառների լայն ընտրանու նմուշներ, անհրաժեշտ է այցելել որևէ արտադրական ձեռնարկության հյուսման արտադրամաս և պարապմունքների մի մասն անցկացնել ձեռնարկությունում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	6 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ

	Գործնական պարապմունք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Ձևավորել գործվածքների և կարի արտադրությունում օգտագործվող նյութերի տեսակների դասակարգման կարողություն
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> ա. գիտի չիյուսված պաստառների ստացման եղանակները և հատկությունները, բ. գիտի կոմպլեքս գործվածքների, թաղանթավոր գործվածքների հատկությունները, գ. ճիշտ է բնութագրում արհեստական մորթիների տեսակներն ու առանձնահատկությունները, դ. ճիշտ է բնութագրում արհեստական կաշվի տեսակները ե. գիտի միջնադիրացու, աստառացու և տոսնձային նյութերի հատկությունները, զ. ծանոթ է հարդարող նյութերի տեսականու և ֆուրնիտուրայի հետ:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների կատարման հիման վրա: Ուսանողը պետք է պատրաստի կարի արտադրությունում օգտագործվող նյութերի հավաքածու (ըստ առաջադրանքի) և կարողանա ճիշտ նշել նրանց օգտագործման բնագավառը: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> – հիմնական և օժանդակ նյութերի առանձնացումը, – նյութերի դասակարգումը ըստ արտադրանքի տեսականու: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը նյութերի դասակարգման հարցում էական բացթողումներ թույլ չի տալիս:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքի միջոցով: Ուսանողը օգտվում է կարի արհեստանոցում եղած հավաքածուներից: Նպատակահարմար է պարապմունքների մի մասն անցկացնել արտադրամասում և կոնկրետ ծանոթանալ օգտագործվող նյութերի տեսականու հետ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	8 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Գործվածքի բնութագիրն ըստ նշանակության որոշելու և կազմելու կարողություն
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> ա. ճիշտ է որոշում գործվածքի փաստացի և մակերեսային խտությունը, բ. ճիշտ է որոշում գործվածքի սահունության չափը, գ. փորձի միջոցով կարողանում է որոշել գործվածքի ֆիզիկական և օպտիկական հատկությունները, դ. ճիշտ է կազմում սպիտակեղենային գործվածքների տեխնիկական բնութագիրը, ե. ճիշտ է կազմում բամբակյա, վույյա, մետաքսե գործվածքների տեխնիկական բնութագրերը և որոշում նրանց օգտագործման բնագավառները, զ. գիտի պոլիէթիլենային, պոլիվինիլքլորիդային թաղանթների հատկությունները և նրանցից մշակված հագուստների առանձնահատկությունները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և փորձնական նմուշների բնութագրման միջոցով: Ուսանողները պետք է կարողանան դասակարգել դիտարկվող նմուշները և տալ հիմնավոր բացատրություններ գործվածքների նշանակության և կիրառման բնագավառների վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> – արհեստական մանրաթելի կիրառման անհրաժեշտ բնագավառները, – բնական մանրաթելից պատրաստված գործվածքների բնութագրերը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է դասերի ընթացքում հաճախել կարի արհեստանոց կամ գործող արտադրամաս և ծանոթանալ օգտագործվող գործվածքների հատկությունների հետ:
Ուսուցման երաշխավորված	8 ժամ

Ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԷՍՔԻՉԱՅԻՆ ԳՐԱՖԻԿԱ ԵՎ ԿՈՄՊՈԶԻՑԻԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՀՄՆ- 5-12-003
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել մտահղացումը արտահայտելու համար գծանկարչական միջոցների և կատարման եղանակների կիրառման կարողություն
Մոդուլի տևողությունը	54 ժամ Տեսական ուսուցում՝ 14 ժամ Գործնական պարապմունք՝ 40 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը յուրացնելու համար մուտքային գիտելիքներ չեն պահանջվում:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ձևավորի գծանկարչական միջոցներով մտահղացման արտահայտման կարողություն, 2. ձևավորել էսքիզային գրաֆիկայի կատարման եղանակների ու միջոցների կիրառման կարողություններ, 3. ձևավորել հագուստի մոդելավորման էսքիզների կատարման կարողություններ, 4. ձևավորել էսքիզավորման ժամանակ կոմպոզիցիայի օրենքների կիրառման հմտություններ:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ձևավորել կարողություն գծանկարչական միջոցներով մտահղացման արտահայտման կարողություն
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է գծանկարչական միջոցներն օգտագործել արտահայտիչ ձևով, բ. մտահղացումը հնարավոր է ընկալել աշխատանքը դիտելուց հետո:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և կատարած աշխատանքի հիման վրա: Լրացուցիչ հարցերի օգնությամբ պարզաբանվելու են ուսանողի մտածելակերպի ազատությունները: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. – նկարչական միջոցների կիրառման հմտությունը, – էսքիզների կատարման սկզբունքների պահպանումը, – ուսանողի նպատակը ձևակերպելու կարողությունը: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը էական սխալներ թույլ չի տալիս, ճիշտ է օգտագործում թուղթը և միջոցները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական աշխատանքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բավարար քանակի գծանկարչական նյութեր և կահավորված աշխատատեղ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	10 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ձևավորել էսքիզային գրաֆիկայի կատարման եղանակների ու միջոցների կիրառման կարողություններ
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է պահպանել էսքիզային գրաֆիկայի կանոնները, բ. արտահայտչամիջոցները կարողանում է օգտագործել տեղին, գ. արդյունքում մտահղացումն ընկալելի է:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, կատարած աշխատանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվում է տարբեր եղանակներով կատարել էսքիզային գրաֆիկա, որի հիման վրա գնահատվում են նրա կարողությունները:

	<p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> - էսքիզային գրաֆիկայի կատարման միջոցների հմտություն, - ուսանողի նպատակի ձևավորումը և նրան հասնելու ուղիները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ նկարչագծագրական կաբինետ և յուրաքանչյուր ուսանողի համար կահավորված աշխատատեղ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	12 ժամ Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական պարապմունք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ձևավորել հագուստի մոդելավորման էսքիզների կատարման կարողություններ
Կատարման չափանիշներ	ա. մտահղացմանը համապատասխան ճիշտ է ընտրում էսքիզի տարբերակը, բ. կարողանում է էսքիզները կատարել պարզ ու մաքուր, գ. պահպանում է էսքիզների կատարման տեխնիկական պահանջները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ուսանողի կատարած բոլոր աշխատանքների դիտարկման հիման վրա: Ուսանողին տրվում են հարցեր իր աշխատանքի տարբեր էտապների և ներկայացրած նմուշների վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. - ժամանակի մոդայի ուղղության ընկալումը, - էսքիզների կատարման սկզբունքների իմացություն, - էսքիզների միջոցով նպատակին հասնելու հմտություն:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական պարապմունքների զուգակցման ճանապարհով: Անհրաժեշտ է ուսանողներին տալ առաջադրանքներ համացանցից նյութեր հայթայթելու նպատակով, անհրաժեշտ է ունենալ կահավորված նկարչական կաբինետ: Կարելի է ուսուցման ընթացքում կազմակերպել կատարած աշխատանքների ցուցադրություն:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	20 ժամ Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական պարապմունք՝ 16 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Ձևավորել էսքիզավորման ժամանակ կոմպոզիցիայի օրենքների կիրառման հմտություններ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ընկալում տարածական ձևը, բ. ճիշտ է պատկերում համաչափությունները, գ. լուսաստվերարկման միջոցով կարողանում է էսքիզին տալ նյութականություն:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և կատարած աշխատանքի վերլուծության հիման վրա: Ուսանողին տրվում են լրացուցիչ հարցեր կոմպոզիցիայի օրենքների իմացությունն ստուգելու նպատակով: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. - էսքիզների համաչափության պահպանումը, - կոմպոզիցիայի սկզբունքների պահպանումը, - կատարման տեխնիկական կատարելությունը: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե էսքիզի և ուսանողի մտահղացման միջև էական տարբերություն չի նկատվում:
Մեթոդաբանությունը և	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական համատեղ պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ

ռեսուրսները	պատրաստի արտադրանքի հարուստ տեսականի և կահավորված կաբինետներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	12 ժամ Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական պարապմունք՝ 8 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՐԴՈՒ ՖԻԳՈՒՐԱՅԻ ՀԱՄԱԶԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԽԵՄԱՆԵՐԻ ՊԱՏԿԵՐՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՀՄՆ- 5-12-004
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել պլաստիկ անատոմիայի, մարդաբանության, մարդաչափության հիմունքների օգտագործման կարողություն, ինչպես նաև հագուստի մոդելավորման և էսքիզների կատարման գործում հմտանալու կարողություն:
Մոդուլի տևողությունը	54 ժամ Տեսական ուսուցում՝ 14 ժամ Գործնական պարապմունք՝ 40 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ ուսանողը պետք է ուսումնասիրած լինի «էսքիզային գրաֆիկա և կոնպոզիցիայի հիմունքներ» մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. կիրառի պլաստիկ անատոմիայի, մարդաբանության, մարդաչափության հիմունքները հագուստի մոդելավորման էսքիզները կատարելիս, 2. պատկերի տարբեր տարիքային խմբերին պատկանող մարդկանց ֆիգուրաներ ստատիկ վիճակում, 3. պատկերի կանացի և տղամարդու ֆիգուրաներով կոնպոզիցիաներ, 4. կատարի հագուստի մոդելավորման էսքիզներ տարբեր արտադրատեսակների համար:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Պլաստիկ անատոմիայի, մարդաբանության, մարդաչափության հիմունքների կիրառում հագուստի մոդելավորման էսքիզները կատարելիս
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է էսքիզների վրա արտահայտել մարմնի պլաստիկան, բ. հմտորեն է օգտագործում մարդաչափության սկզբունքները էսքիզում:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և ներկայացրած առաջադրանքների վերլուծության հիման վրա: Ուսանողին տրվելու են հարցեր մարդաբանության, մարդաչափության վերաբերյալ գիտելիքները ստուգելու նպատակով: Ուսանողը պետք է էսքիզի վրա նշի դրանց կիրառման հետևանքով արված լրացումները: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. – տիպային ֆիգուրայի համաչափությունները, – տիպայինից շեղված մասերի ներկայացումը էսքիզների մեջ: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա կարողանում է էսքիզի վրա ճիշտ ներկայացնել ֆիգուրայի անհամամասնությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների ընթացքում: Անհրաժեշտ է ունենալ մանեկեններ, անատոմիական պլակատներ, մարդու որևէ չափի կմախք, կահավորված նկարչության կաբինետ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	12 ժամ Տեսական ուսուցում՝ 6 ժամ Գործնական պարապմունք՝ 6 ժամ

Ուսումնառության արդյունք 2	Պատկերել տարբեր տարիքային խմբերին պատկանող մարդկանց ֆիզուրաներ ստատիկ վիճակում
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է թղթի վրա ճիշտ տեղադրել ֆիզուրները, բ. ճիշտ է պահպանում տարիքային խմբերը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և ներկայացրած աշխատանքների հիման վրա, որոնք ուսանողները կատարել են ուսումնառության ընթացքում: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ճիշտ է պատկերել առաջադրված խմբերի ֆիզուրաները ստատիկ վիճակում: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. – ստատիկ վիճակում ֆիզուրայի պատկերման սկզբունքները, – տարբեր տարիքային խմբերի ֆիզուրաների առանձնահատկությունները և ներկայացումը ստատիկ վիճակում: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա կարողանում է ստատիկ վիճակում ներկայացնել մարդու ֆիզուրայի չափաբանական տվյալները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների զուգորդմամբ: Անհրաժեշտ է ունենալ համացանցից հանված տվյալների բազա:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	12 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 10 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Պատկերել կանացի և տղամարդու ֆիզուրաներով կոմպոզիցիաներ
Կատարման չափանիշներ	ա. կոմպոզիցիաներում ճիշտ են պահպանված համաչափությունները, բ. աշխատանքը կատարված է խնամքով:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և ներկայացրած աշխատանքի վերլուծության միջոցով: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. – կանացի և տղամարդու ֆիզուրաներով կոմպոզիցիա կազմելու ընդունված տարբերակները, – գերակա դիրքերի ընդգծումը կոմպոզիցիայի մեջ, – կոմպոզիցիայի մեջ համաչափությունների պահպանման խնդիրը, – կոմպոզիցիայի կենտրոնի գաղափարը: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե կոմպոզիցիայի մեջ չկան էական չափախախտումներ և անհամամասնություններ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների զուգորդմամբ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, պլակատներ, կահավորված նկարչության կաբինետ
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	15 ժամ Տեսական ուսուցում՝ 3 ժամ Գործնական պարապմունք՝ 12 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Հագուստի մոդելավորման էսքիզների կատարում տարբեր արտադրատեսակների համար
Կատարման չափանիշներ	ա. էսքիզների ընտրությունը կատարում է իր մտահղացմանը համապատասխան, բ. կարողանում է պատկերել լույս-ստվեր անցումը, գ. ճիշտ է պահպանում համաչափությունը, դ. էսքիզները կատարում է արտահայտիչ և ընկալելի, համապատասխան արտադրատեսակների:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և ներկայացրած նմուշի վերլուծության հիման վրա: Ուսանողին տրվում են հարցեր տարբեր արտադրատեսակների էսքիզների կատարման ընդհանրությունների և տարբերությունների

	<p>վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> - էքսիզներ տիպական արտադրատեսակների համար, - էքսիզներ ոչ տիպական արտադրատեսակների համար, - անհատական պատվերների սպասարկումը: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա յուրաքանչյուր արտադրատեսակի համար պահպանում է նրան հատուկ ոճը և բնութագրիչ գծերը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական աշխատանքների և ցուցադրությունների հիման վրա: Անհրաժեշտ է ուսանողին ապահովել համապատասխան նկարչագծագրական պարագաներով:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	15 ժամ Տեսական ուսուցում՝ 3 ժամ Գործնական պարապմունք՝ 12 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՐԴՈՒ ՖԻԳՈՒՐԱՅԻ ՊԱՏԿԵՐՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՀՄՆ -5-12-005
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել հագուստի մոդելավորման էքսիզների կատարման գործում շարժման մեջ՝ կանացի, տղամարդու և տարբեր տարիքային խմբերի երեխաներ պատկերելու, բազմաֆիգուր կոմպոզիցիաներ ստեղծելու կարողություն,
Մոդուլի տևողությունը	54 ժամ Տեսական ուսուցում՝ 10 ժամ Գործնական պարապմունք՝ 44 ժամ
Մուտքային պահանջները	Ուսանողը պետք է ուսումնասիրած լինի «Էքսիզային գրաֆիկա և կոմպոզիցիայի հիմունքներ» և «Մարդու ֆիգուրայի համաչափությունների սխեմաների պատկերման հմտություններ» մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.</p> <ol style="list-style-type: none"> 1. ձևավորի հագուստի մոդելավորման էքսիզների կատարման հմտություն, 2. ունենա էքսիզների օգնությամբ շարժումը արտահայտելու հմտություն, 3. ձևավորի բազմաֆիգուր կոմպոզիցիաների պատկերման կարողություն, 4. ձևավորի մարդու մարմնի ու մարմնի մասերի պատկերման կարողություն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ձևավորել հագուստի մոդելավորման էքսիզների կատարման հմտություն
Կատարման չափանիշներ	<p>ա. ուսանողներին հանձնարարել էքսիզների մի քանի խմբաքանակ,</p> <p>բ. հանձնարարված խմբաքանակից կատարել առնվազն 5 աշխատանք:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և էքսիզների կատարման հարցում ձեռք բերված հմտության հիման վրա: Գնահատում է հանձնախումբը կամ պարապող դասախոսը ներկայացված աշխատանքների հիման վրա:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> - հագուստի նկարչական ձևավորումը, - ձևաստեղծման նկարչական մոտեցումը մոդելավորման մեջ, - նյութերի օգտագործման արդյունավետությունը: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա հագուստով ֆիգուրի պատկերման հարցում</p>

	կարողանում է կիրառել տարբեր եղանակներ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների հաջորդական կիրառման ճանապարհով: Գործնական դասերն անց են կացվում նկարչության կահավորված կաբինետներում: Անհրաժեշտ է ունենալ գունավոր պլակատներ և մասնագիտական գրականություն:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	12 ժամ Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական պարապմունք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Էսքիզների օգնությամբ շարժումն արտահայտելու հմտություն
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է հաշվի առնել տարբեր սեռահասակային խմբերի առանձնահատկությունները և բնորոշ գծերը էսքիզների մեջ, բ. տարբեր տարիքային խմբերի երեխաների ֆիզուրները շարժման մեջ պատկերված են հմտորեն:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և կատարած աշխատանքի հիման վրա: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. – արտադրատեսակների խմբավորումը ըստ էսքիզների առանձնահատկությունների, – համաչափությունների պահպանումը, – հագուստի նկարչական ձևավորումը: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա արտադրատեսակների պատկերման ժամանակ էական շեղումներ թույլ չի տալիս (կոմպոզիցիայի խախտում, անհամաչափություններ և այլն):
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսուցումը կատարվում է գործնական աշխատանքների միջոցով: Ուսանողին նախապես հանձնարարվում են տարբեր արտադրատեսակներ, և ուսանողը ներկայացնում է նրանց գծանկարչական պատկերները: Ուսանողը պետք է ապահովված լինի կահավորված աշխատատեղով:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	18 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 16 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Բազմաֆիզուր կոմպոզիցիաների պատկերման կարողություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է կատարել կոմպոզիցիան կազմող տարրերի ընտրությունը, բ. էսքիզի մեջ պահպանված են համաչափությունները, գ. կոմպոզիցիան կազմված է գրագետ և հմուտ:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և ներկայացված աշխատանքի վերլուծության հիման վրա: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. – կոմպոզիցիայի կենտրոնի գաղափարը, – ստեղծագործական մոտեցման աղբյուրները, – ասոցիատիվ մտածողությունը կոմպոզիցիայի մեջ: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նրա աշխատանքը արժանանում է ստուգող հանձնախմբի հավանությանը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսուցումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մանեկեններ, բազմաֆիզուր պատկերներով պլակատներ, անհրաժեշտ քանակի նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	18 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 16 ժամ

Ուսումնառության արդյունք 4	Մարդու մարմնի ու մարմնի մասերի պատկերման կարողություն
Կատարման չափանիշներ	ա. պահպանված են մարմնի մասերի համաչափությունները, բ. կարողանում է ֆիզուրան պատկերել տարբեր դիրքերից, գ. մարդու ֆիզուրան շարժումներում պատկերված է գրագետ:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և կատարված աշխատանքի հիման վրա: Լրացուցիչ հարցերով ստուգվում են ուսանողի գիտելիքները մարմնի մասնատման սկզբունքների մասին: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. – մարդաբանական տվյալների օգտագործումը մարմնի պատկերման ժամանակ, – ուրվագծի գաղափարը առանձին մասերի պատկերման ժամանակ, ինչպես ներկայացնել, – ինչպես ցույց տալ մարմնի պլաստիկան առանձին մասերի պատկերման դեպքում: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը կարողանում է պատկերել մարմնի առանձին մասերը՝ հավատարիմ մնալով մարմնի պատկերի ոգուն:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ առանձին մարմնի մասերի նմուշեր և կահավորված նկարչական կաբինետ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	16 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 14 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱԳՈՒՍՏՈՎ ՖԻԳՈՒՐԱՅԻ ԷՍՔԻՉՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՀՄՆ -5-12-006
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել հագուստի տարբեր տեսակների գծանկարման և պատկերման եղանակների կիրառման կարողություն, գծանկարչական միջոցներով հագուստի հավաքածուի հիմնական գաղափարի արտահայտման կարողություն:
Մոդուլի տևողությունը	54 ժամ Տեսական ուսուցում՝ 8 ժամ Գործնական պարապմունք՝ 46 ժամ
Մուտքային պահանջները	Ուսանողը պետք է ուսումնասիրած լինի «Էսքիզային գրաֆիկա և կոմպոզիցիայի հիմունքներ» և «Մարդու ֆիզուրայի պատկերման հմտություններ» մոդուլները
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ունենա հագուստով ֆիզուրաների գծանկարման եղանակների կիրառման հմտություն, 2. ունենա Գծանկարչական եղանակով կարի արտադրատեսակների պատկերման հմտություն, 3. ձևավորի Էսքիզների և ճեպանկարների կատարման կարողություն, 4. ձևավորի մեկ և ավելի թվով մարդկանց կոմպոզիցիաների գրաֆիկական լուծումներ ներկայացնելու կարողություն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Հագուստով ֆիզուրաների գծանկարման եղանակների կիրառման հմտություն
Կատարման չափանիշներ	ա. գծանկարների մեջ կարողանում է արտահայտել մարդու շարժումների պլաստիկան, բ. ճիշտ է ներկայացնում տարբեր տեսակի հագուստներով շարժումների պլաստիկայի առանձնահատկությունները, գ. կարողանում է մարդու կառուցվածքին համահունչ արտահայտել շարժումների պլաստիկան:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարականների միջոցով:

	<p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> - ձևաստեղծման նկարչական մոտեցումը հազուստի մոդելավորման մեջ, - հազուստով ֆիգուրայի և մերկ ֆիգուրայի պատկերման առանձնահատկությունները: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ճիշտ է պատասխանում հարցերին և գծանկարի մեջ էական թերություններ չունի:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների զուգակցման հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, ինտերնետային դասարան, նկարչագծագրական տարբեր նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	12 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 10 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Գծանկարչական եղանակով կարի արտադրատեսակների պատկերման հմտություն
Կատարման չափանիշներ	ա. գծանկարի մեջ արտահայտված են հազուստի կառուցվածքային հիմունքները, բ. հանձնարարված առաջադրանքի մեջ կարողանում է ընտրել ֆիգուրներին համապատասխան հազուստներ:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և տրված առաջադրանքների արդյունքների հիման վրա: Ուսանողին կտրվեն լրացուցիչ հարցեր տարբեր արտադրատեսակների նմուշների պատկերման վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. - կարի արտադրատեսակների գծանկարչական պատկերման տարատեսակները, - ինչպես ձեռք բերել նկարելու հմտություն, - հազուստի թերությունների հայտնաբերումը էսքիզներից: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ներկայացրած նմուշի մեջ կոմպոզիցիոն թերություններ թույլ չի տվել և ճիշտ է պատասխանում տրված հարցերին:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների կատարման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տարբեր արտադրատեսակների նմուշներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	14 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 12 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Էսքիզների և ճեպանկարների կատարման կարողություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է կատարում հազուստով ֆիգուրների էսքիզը, բ. ճեպանկարները կատարված են գրագետ և արտահայտիչ:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և հանձնաժողովի կողմից տրված առաջադրանքով ճեպանկարի կատարման արդյունքի հիման վրա: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. - ճեպանկարների նշանակությունը մոդելավորման մեջ, - ճեպանկարից էսքիզին անցնելու տեխնիկան, - ուսանողի նկարչական կարողությունների աճի դինամիկան: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նրա ներկայացրած նմուշը արժանանում է հանձնաժողովի ընդհանուր դրվատանքին և նա ճիշտ է պատասխանում լրացուցիչ տրված հարցերին:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսուցումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական պարապմունքների արդյունքում: Ուսումնառության ընթացքում ուսանողին տրվում են առաջադրանքներ, որոնք նա ներկայացնում է ամփոփման ժամանակ

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	18 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 16 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Մեկ և ավելի թվով մարդկանց կոմպոզիցիաների գրաֆիկական լուծումներ ներկայացնելու կարողություն
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է գրագետ ձևով ներկայացնել մեկ և ավելի թվով ֆիգուրների գրաֆիկական լուծումներ, բ. կարողանում է տարբեր սիլուետների համար տալ համապատասխան գրաֆիկական լուծումներ, գ. գծանկարչական միջոցներով ճիշտ է ներկայացնում հագուստների հավաքածուի հիմնական գաղափարը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և կատարված աշխատանքի կոլեգիալ վերլուծության արդյունքի հիման վրա: Հանձնաժողովի անդամների տարածայնությունների դեպքում ուսանողին տալիս են լրացուցիչ հարցեր: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. – կոմպոզիցիայի կենտրոնի հասկացությունը, – մեկ և ավելի թվով ֆիգուրաների բաշխումը թղթի վրա, – տարբեր սիլուետների համադրությունը մեկ աշխատանքի մեջ: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ճիշտ է պատասխանել հարցերին, և աշխատանքի մեջ էական թերություններ չկան:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների անցկացման միջոցով: Կատարվում են նաև լաբորատոր աշխատանքներ: Ուսանողներին պետք է ապահովել կահավորված աշխատատեղերով:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	10 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 8 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱԳՈՒՍՏԻ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՀՄՆ -5-12-007
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ձևավորել ուսանողների մոտ հագուստի հանգույցների մշակման տարբեր հմտություններ, որոնք անհրաժեշտ են գծագրերը ճիշտ կատարելու և լեկալները պատրաստելիս ավելացումները ճիշտ ընտրելու համար:
Մոդուլի տևողությունը	54 ժամ Տեսական ուսուցում՝ 20 ժամ Գործնական պարապմունք՝ 34 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ չեն պահանջվում:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ունենա հագուստի հիմնական դետալների մշակման կարողություն, 2. ունենա հագուստի մանր մասնիկների մշակման կարողություն, 3. կարողանա հագուստի մանր մասնիկները միացնել արտադրանքին:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Հագուստի հիմնական դետալների մշակման կարողություն
Կատարման չափանիշներ	ա. ըստ մշակվող հանգույցի ճիշտ է ընտրված մեքենասարքավորումը, բ. ճիշտ է ընտրված մշակման ձևը – կարատեսակը, գ. ճիշտ է կատարում ջերմախոնավային մշակումը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և տրված ռաջադրանքի կատարման հիման վրա: Ուսանողին

	<p>տրվելու են հարցեր հիմնական դետալների մշակման տեխնոլոգիական հաջորդականության մասին:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> - հիմնական և օժանդակ դետալների դասակարգումը, - հիմնական դետալների մշակման տեխնոլոգիան, - հիմնական դետալների համար նախատեսված օժանդակ նյութեր, - աշխատանքի անվտանգության ապահովման խնդիրները: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ճիշտ է պատասխանում հարցերին և առաջադրանքը կատարել է առանց տեխնիկական թերությունների:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքների կատարման միջոցով:</p> <p>Կարելի է հաճախել նաև գործող արտադրամաս: Ուսանողին պետք է ապահովել մասնագիտական գրականությամբ, դետալների նմուշների բազմազանությամբ, կարի մեքենայով և օժանդակ նյութերով:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>16 ժամ</p> <p>Տեսական ուսուցում՝ 6 ժամ</p> <p>Գործնական պարապմունք՝ 10 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	Հագուստի մանր մասնիկների մշակման կարողություն
Կատարման չափանիշներ	<p>ա. ըստ մշակվող հանգույցի ճիշտ է ընտրված մեքենասարքավորումը,</p> <p>բ. ճիշտ է ընտրված մշակման ձևը,</p> <p>գ. ճիշտ է կատարում ջերմախոնավային մշակումը:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և տրված առաջադրանքի կատարման արդյունքով: Ուսանողին տրվելու են հարցեր մանր մասնիկների մշակման տեխնոլոգիայի վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> - մանր մասնիկների դասակարգումը, - յուրաքանչյուր խմբի մշակման առանձնահատկությունները, - մանր մասնիկների համար օժանդակ նյութերի ընտրումը, - խոտանի առաջացման պատճառները և վերացման ուղիները: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ճիշտ է պատասխանում հարցերին և առանց էական թերությունների կատարում է առաջադրանքը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքի կատարման միջոցով:</p> <p>Ուսանողը կարի մեքենայի վրա մշակում է հանձնարարված մասնիկը: Ուսանողին պետք է ապահովել նյութերով, գրականությամբ, իյուստրացիաներով, կարի մեքենայով և օժանդակ նյութերով</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>18 ժամ</p> <p>Տեսական ուսուցում՝ 6 ժամ</p> <p>Գործնական պարապմունք՝ 12 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	Հագուստի մանր մասնիկների միացումն արտադրանքին
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ընտրում մասնիկները միացնելու սարքավորումները,</p> <p>բ. ճիշտ է պահպանում կարաբաժինները,</p> <p>գ. կարողանում է մասնիկները նստեցնել արտադրանքին առանց փոթերի:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարականների միջոցով: Ուսանողին տրվում են հարցեր մասնիկների հավաքման տեխնոլոգիական հաջորդականության մասին:</p>

	<p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> - մասնիկների նախապատրաստումը միացմանը, - օժանդակ նյութերի ընտրությունը, - հնարավոր թերությունների առաջացման պատճառները և վերացման ուղիները, - կարաբաժինների պահպանման խնդիրը: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ճիշտ է պատասխանում հարցերին, տիրապետում է մեքենային:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքների կատարման միջոցով: Ուսանողը կարողանում է հիմնական մասնիկներն ամրացնել արտադրանքին: Պարապմունքների մի մասը կարելի է անցկացնել կարի արհեստանոցում: Ուսանողին պետք է ապահովել կարի մեքենայով, օժանդակ նյութերով և մասնագիտական գրականությամբ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>20 ժամ Տեսական ուսուցում՝ 8 ժամ Գործնական պարապմունք՝ 12 ժամ</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՁԵՌՔԻ ԿԱՐԱՏԵՍԱԿՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՀՄՆ -5-12-008
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ձեռքով և կարի մեքենաների օգտագործմամբ տարբեր կարատեսակներ կատարելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	<p>54 ժամ Տեսական ուսուցում՝ 14 ժամ Գործնական պարապմունք՝ 40 ժամ</p>
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՀՄՆ-5-12-007 «Հագուստի հանգույցների մշակման հմտություններ: Ընդհանուր կարողություններ» մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.</p> <ol style="list-style-type: none"> 1. ձևավորի ձեռքի կարատեսակների իմացություն, 2. ունենա կարի մեքենաների պարզ սպասարկման կարողություն, 3. ձևավորի մեքենաների վրա աշխատելու կարողություն՝ օգտագործելով նաև օժանդակ հարմարանքները: 4. ունենա սարքավորումների իմացություն և օգտագործման կարողություն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ձեռքի կարատեսակների իմացություն
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ են ընտրված ձեռքի կարատեսակներ մշակելու համար գործիքները, բ. ըստ տեղամասերի ճիշտ են մշակված համապատասխան կարատեսակները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարականների միջոցով: Ուսանողին տրվում են հարցեր կարատեսակների ստացման վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> - ձեռքի կարատեսակների օգտագործման անհրաժեշտությունը, - ձեռքի կարատեսակների օգտագործումը՝ կախված գործվածքի տեսակից և արտադրանքի տեսականուց,

	<p>– ձեռքի կարատեսակների որակի հսկման անհրաժեշտությունը:</p> <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա տիրապետում է ձեռքի կարատեսակների կատարման տեխնոլոգիային առանց էական թերությունների և ճիշտ է պատասխանում հարցերին:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքի կատարման շնորհիվ:</p> <p>Ուսանողներին տրվում են անհատական առաջադրանքներ: Ուսանողին պետք է ապահովել գործիքներով, նյութերով, իլյուստրացիոն պլակատներով, մասնագիտական գրականությամբ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>14 ժամ</p> <p>Տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>Գործնական պարապմունք՝ 12 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	Կարի մեքենաների պարզ սպասարկման կարողություն
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է բացատրում տարբեր կարի մեքենաների նշանակությունը, ճիշտ է թելում մեքենան, լիցքավորում,</p> <p>բ. ճիշտ է կարգավորում թելի ձգվածությունը և կարակտի քանակը,</p> <p>գ. ճիշտ է փոխում ասեղը և տեղադրում մաքրոքը, ճիշտ է կատարում մեքենայի յուղումը,</p> <p>դ. կարողանում է պարզել անսարքությունների պատճառը:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարականների միջոցով: Ուսանողը պետք է կարողանա սպասարկել կարի մեքենան և վերացնել պարզագույն թերությունները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> – մեքենայի նախապատրաստումը աշխատանքին, – պարզագույն թերությունների առաջացման պատճառները, – աշխատանքի անվտանգության ապահովումը, – մանր մեխանիզացիայի սպասարկման կարողություն: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ինքնուրույն կարողանում է գործարկել մեքենան:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքների կատարման միջոցով:</p> <p>Ուսանողին պետք է ապահովել օժանդակ գործիքներով, մեքենայի յուղով, ասեղներով, մաքրոքով, մասնագիտական գրականությամբ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>14 ժամ</p> <p>Տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>Գործնական պարապմունք՝ 12 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	Մեքենաների վրա աշխատելու կարողություն՝ օգտագործելով նաև օժանդակ հարմարանքներ
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է բնութագրում մեքենայական կարերի տեսակները,</p> <p>բ. ճիշտ է միացնում և անջատում մեքենաները, մեքենայական կարերի տարբեր տեսակները ճիշտ է կատարում,</p> <p>գ. ճիշտ է օգտագործում մասնագիտական մեքենաները, մանր մեխանիզացիան:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարականների միջոցով: Ուսանողը պետք է կարողանա գործարկել կարի մեքենան և կատարել տեխնոլոգիական պրոցեսներ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> – պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները, – գիտի մեքենայական կարատեսակների ստացման տեխնոլոգիան, – կարողանում է վերացնել պարզագույն խափանումները, – օժանդակ սարքավորումների գործարկման կարողությունը:

	Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա կարողանում է անխափան աշխատեցնել մեքենան և կատարել որևէ օպերացիա՝ առանց լուրջ թերությունների:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքների կատարման միջոցով: Ուսանողին պետք է տրամադրել կարի մեքենա, նյութեր, օժանդակ սարքավորումներ և մասնագիտական գրականություն:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	14 ժամ Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական պարապմունք՝ 10 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Սարքավորումների իմացություն և օգտագործման կարողություն
Կատարման չափանիշներ	ա. ճանաչում է սարքավորումները և բնութագրում, բ. ճիշտ է ընտրում սարքավորումների ռեժիմը, գ. ճիշտ է կատարում արդուկման գործողությունները և ճիշտ է օգտագործում մամլիչները, դ. պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարականների միջոցով: Ուսանողին տրվում են հարցեր արտադրամասում օգտագործվող սարքավորումների տեխնիկական բնութագրերի մասին: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. – կարի արտադրամասում օգտագործվող մեքենասարքավորումների դասակարգում, – նրանց շահագործման կարողությունների ձեռքբերում, – անվտանգության կանոնների պահպանման կարևորությունը, – սարքավորումների տեխնիկական պարամետրերի իմացություն: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա կարողանում է բոլոր սարքավորումներն օգտագործել իրենց նշանակությամբ և վերացնել պարզագույն թերությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքների կատարման միջոցով: Ուսանողը պետք է այցելի գործող կարի արտադրամաս և տեղում ուսումնասիրի սարքավորումները:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	12 ժամ Տեսական ուսուցում՝ 6 ժամ Գործնական պարապմունք՝ 6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱԳՈՒՍՏԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՀՄՆ -5-12-009
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել մասսայական արտադրության ու անհատական պատվիրատուի համար տարբեր ձև ու բովանդակություն ունեցող մոդելների մշակման և նախագծման կարողություն, հանդերձանքի գունային լուծումների և օգտագործվող նյութերի ֆակտուրան էքսիզներում պատկերելու և դաջման սկզբունքով հագուստի մոդելավորման կիրառման կարողություն:
Մոդուլի տևողությունը	36 ժամ Տեսական ուսուցում՝ 26 ժամ Գործնական պարապմունք՝ 10 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՀՄՆ-5-12-005 «Մարդու ֆիզուրայի պատկերման հմտություններ» մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1.ունենա մասսայական արտադրության ու անհատական պատվիրատուի համար և տարբեր ձև ու բովանդակություն ունեցող

	<p>մողելներ մշակելու և նախագծելու կարողություններ,</p> <p>2. ունենա հագուստի դիզայնի նախագծերի մշակման կարողություն՝ ելնելով կոնստրուկտորատեխնոլոգիական, գեղագիտական, տնտեսագիտական ու էկոլոգիական չափանիշներից,</p> <p>3. ունենա ներկայացչական էսքիզներում հանդերձանքի գունային լուծումների և օգտագործվող նյութերի ֆակտուրայի պատկերման կարողություն,</p> <p>4. ունենա էսքիզային տարբերակով հագուստի դեկորատիվ վերջնամշակման, հագուստի տեսողական լուծումների վիզուալ ընկալման պատկերի ներկայացման կարողություն,</p> <p>5. մողելավորման ընթացքում կիրառի դաջման սկզբունքը:</p>
Մողուլի գնահատման կարգը	Մողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Մասսայական արտադրության ու անհատական պատվիրատուի համար, ինչպես նաև տարբեր ձև ու բովանդակություն ունեցող մողելներ մշակելու և նախագծելու կարողություններ
Կատարման չափանիշներ	<p>ա. կարողանում է պատվիրատուի պահանջով մշակել մողելը,</p> <p>բ. ճիշտ է նախագծում մշակված մողելը,</p> <p>գ. մասսայական արտադրության համար կարողանում է ստեղծել պահանջված արտադրանքի մողելը, ստեղծել նմուշը,</p> <p>դ. նմուշի հետ ճիշտ է կառուցում ձևման լեկալները,</p> <p>ե. մշակված մողելը համապատասխանում է առաջարկված ձևին և բովանդակությանը:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարականների միջոցով: Ուսանողին տրվում են հարցեր հագուստի գեղարվեստական ձևավորման հիմունքների մասին:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> - ստեղծագործական և ոգեշնչման աղբյուրները մողելավորման մեջ, - ձևաստեղծման նկարչական մոտեցումը մողելավորման մեջ, - տարբեր դասերի (մանկական, երիտասարդական և այլն) հագուստների մողելավորման սկզբունքները, - պատմական հագուստի ժամանակակից ոճավորումը: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ճիշտ է պատկերացնում հագուստի ձևավորման սկզբունքները և պատասխանում է հարցերի 80-90%-ին:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների զուգորդման (մեկընդմեջ պարապմունքների կազմակերպում) միջոցով: Ուսանողին պետք է տրամադրել մասնագիտական գրականություն, ինտերնետ կապով համակարգիչ, էսքիզների, պլակատների հավաքածու:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	6 ժամ Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական պարապմունք՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Հագուստի դիզայնի նախագծերի մշակման կարողություն՝ ելնելով կոնստրուկտորատեխնոլոգիական, գեղագիտական, տնտեսագիտական ու էկոլոգիական չափանիշներից
Կատարման չափանիշներ	<p>ա. հագուստի դիզայնի նախագիծը մշակվել է գրագետ և բավարարում է կոնստրուկտորատեխնոլոգիական, գեղագիտական, տնտեսագիտական ու էկոլոգիական չափանիշներին,</p> <p>բ. կարողանում է լուծել տեսողական խաբկանքների խնդիրը:</p>
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարականների միջոցով: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

	<ul style="list-style-type: none"> - հագուստի դիզայնի կապը հագուստի մոդելավորման հետ, - դիզայնի կապը էկոլոգիական չափանիշների հետ, - դիզայնի նախագծի մշակման էտապները: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ճիշտ է պատասխանում առաջադրված հարցերի 90%-ին:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքների կատարման միջոցով: Հնարավորություն պետք է ստեղծել սովորողներին տանելու քաղաքում գործող դիզայնի կենտրոններ, մասնակցել մոդաների ցուցադրությունների:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	6 ժամ Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական պարապմունք՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացչական էքզիզներում հանդերձանքի գունային լուծումների և օգտագործվող նյութերի ֆակտուրայի պատկերման կարողություն
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է գունային լուծումների միջոցով ամբողջացնել էքզիզը, բ. ճիշտ է ներկայացնում օգտագործվող նյութերի ֆակտուրան, գ. գունային լուծումները և ֆակտուրան համապատասխանում են առաջադրանքին:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա: Ուսանողին նախապես տրվում է առաջադրանք գունային լուծումների պատկերման կարողությունները պարզելու նպատակով: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. <ul style="list-style-type: none"> - գործվածքի դեկորատիվ ձևավորման սկզբունքները, - գույնը հագուստի մեջ, - նախշազարդը և գործվածքը, - նշանաբանը որպես ոգևորության աղբյուր: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա կարողանում է կողմնորոշվել գունային գամմայի մեջ, գունային լուծումները համապատասխանում են մոդելյորի մտահղացմանը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքների կատարման միջոցով: Ուսանողին պետք է ապահովվել տարազների այլումով, մասնագիտական գրականությամբ, ինտերնետ կապով համակարգչով:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	8 ժամ Տեսական ուսուցում՝ 6 ժամ Գործնական պարապմունք՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Էքզիզային տարբերակով հագուստի դեկորատիվ վերջնամշակման, հագուստի տեսողական-վիզուալ ընկալման պատկերի լուծումների ներկայացման կարողություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է կատարել հագուստի դեկորատիվ վերջնամշակումը, բ. հագուստի տեսողական լուծումների վիզուալ պատկերը ներկայացվել են էքզիզներում ընկալելի և համապատասխանում են առաջադրանքին, գ. ներկայացված էքզիզային շարքը իր մեջ պարունակում է ինֆորմատիվ պաշար:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է կատարած աշխատանքի վերլուծության հիման վրա: Ուսանողը ներկայացնում է ուսուցման ընթացքում կատարած աշխատանքները:

Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների կատարման հիման վրա: Ուսանողին տրվելու են հարցեր հայկական աշխարհներին բնորոշ սիմվոլիկաների վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. – ըստ աշխարհների տարազների գույները, աքսեսուարները, – հայկական տարազների էլեմենտների արտահայտումը գորգերի և կարպետների վրա: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա գիտի պատմական աշխարհներին բնորոշ սիմվոլիկաները և դրանք օգտագործում է իր էսքիզներում:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների, մշակույթի կենտրոններ այցելությունների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ պատմական քարտեզներ, դասագրքեր, իլյուստրացիոն միջոցներ, ինտերնետ կապով լսարան:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	8 ժամ Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական պարապմունք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Ազգային-ռեզիոնայ բաղադրիչներ պարունակող առարկաներ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում տարազի տարրերի կիրառումը տարբեր առարկաների վրա, բ. ճիշտ է պատկերացնում ազգային-ռեզիոնայ բաղադրիչների օգտագործումը ժամանակակից հագուստներում:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է թեստի և լրացուցիչ առաջադրանքի միջոցով: Թեստը պետք է կազմել հայկական պատմական աշխարհների սիմվոլիկաների վերաբերյալ: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա դասախոսի հանձնարարությամբ ներկայացնում է որևէ պատմական աշխարհի տարազին բնորոշ բաղադրիչ պարունակող առարկաների վերաբերյալ ռեֆերատ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների, մշակույթի կենտրոններ այցելությունների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ պատմական քարտեզներ, դասագրքեր, իլյուստրացիոն միջոցներ, ինտերնետ կապով լսարան:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	7 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 5 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Ժողովրդական արվեստների զարգացման ներքին կառուցվածքի իմացություն
Կատարման չափանիշներ	ա. գիտի ժողովրդական կիրառական արվեստների պատմությունը, բ. ճիշտ է ներկայացնում նրա զարգացման փուլերը՝ կախված տարածաշրջաններից, գ. ճիշտ է պատկերացնում ժողովրդական արվեստների դերը արդի էտապում և ձեռարվեստների զարգացման ներքին կառուցվածքը:

Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է թեստի և հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողներին տրվում են հարցեր ժողովրդական կիրառական արվեստի վերաբերյալ: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա պատկերացնում է ժողովրդական արվեստների զարգացման փուլերը և ձեռարվեստների դերը արդի էտապում:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների, մշակույթի կենտրոններ այցելությունների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ պատմական քարտեզներ, դասագրքեր, իլլուստրացիոն միջոցներ, ինտերնետ կապով լսարան:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	7 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 5 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « AUTOCAD»	
Մոդուլի դասիչը	ՀՄՆ -5-12-024
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսում է տալ Auto CAD համակարգչային նախագծային ծրագրի հետ աշխատանքի նախնական գիտելիքները:
Մոդուլի տևողությունը	54 ժամ Տեսական ուսուցում՝ 14 ժամ Գործնական պարապմունք՝ 40 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԱՀ-ՀՕՀ-5-12-001 «Համակարգչային օպերատորության հիմունքներ» մոդուլը
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. կարողանա բացատրել Auto CAD ծրագրի նշանակությունը, բացատրել Auto CAD ծրագրի պատուհանի կառուցվածքը, օգտագործել Auto CAD ծրագրի մենյուն և գործիքների խմբերը, կատարել new, open, close, save, հրամանները, փակել փոստաթուղթը (նախագիծը), փակել Auto CAD ծրագիրը, 2. կարողանա մասշտաբավորել պատկերը, օգտագործել կուրսորի ռեժիմները, մկնիկով կատարել տարրական գործողություններ, նախապատրաստել աշխատանքային դաշտը, օգտագործել Draw խմբի Line, Polyline, Construction line գործիքները, աշխատել միաժամանակ մի քանի փաստաթղթերի հետ 3. ընտրի օբյեկտը մկնիկով, բռնակների միջոցով կատարի օբյեկտի տեղափոխում, պտույտ և չափերի փոփոխում, օգտագործի կատարված գործողությունների ցանկը, 4. կարգավորի պատկերի չափերը, կարողանա օգտագործել մասշտաբավորման գործակիցները, օգտագործել Auto CAD-ի աշխատանքային DRID, SNAP, POLAR ուղղորդման ռեժիմները, օգտագործել TRIM հրամանը 5. ստեղծի շերտեր, տեղավորի օբյեկտը շերտի մեջ, կատարի գործողություններ շերտերի հետ, ընտրի գծի տեսակը շերտի համար, ընտրի գծի տեսակը օբյեկտի համար, փոխի գծի մասշտաբը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Բացատրել Auto CAD ծրագրի նշանակությունը, բացատրել Auto CAD ծրագրի պատուհանի կառուցվածքը, օգտագործել Auto CAD ծրագրի մենյուն և գործիքների խմբերը, կատարել new, open, close, save, հրամանները, փակել փոստաթուղթը (նախագիծը), փակել Auto CAD ծրագիրը
Կատարման չափանիշներ	ա. կարողանա բացատրել Auto CAD ծրագրի նշանակությունը, հիմնական հնարավորությունները, օգտագործման ոլորտը բ. կարողանա բացատրել Auto CAD ծրագրի պատուհանի կառուցվածքը գ. կարողանա փոփոխել և կազմակերպել Auto CAD ծրագրի ինտերֆեյսը

	<p>դ. կարողանա բացել և փակել Auto CAD ծրագրի մենյուն</p> <p>ե. կարողանա բացել Auto CAD ծրագրի նոր նախագիծ</p> <p>զ. կարողանա բացել Auto CAD ծրագրի պատրաստի նախագիծը</p> <p>է. կարողանա փակել Auto CAD ծրագրի նախագիծը</p> <p>ը. կարողանա պահպանել Auto CAD ծրագրի նախագիծը</p> <p>թ. կարողանա փակել Auto CAD ծրագիրը:</p>
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարականների կատարման հիման վրա:</p> <p>1. Ուսանողին հանձնարարվում է բանավոր բացատրել AutoCAD ծրագրի նշանակությունը, ներկայացնել AutoCAD ծրագրի օգտագործման ոլորտները, ծրագրի հիմնական հնարավորությունները</p> <p>2. Ուսանողին հանձնարարվում է բացել AutoCAD ծրագիրը և բացատրել ծրագրի պատուհանի կառուցվածք՝ ներկայացնելով ծրագրի պատուհանի հիմնական բաղկացուցիչ մասերը</p> <p>3. Ուսանողին հանձնարարվում է բացել AutoCAD ծրագիրը: Ուսանողը պետք է կատարի ծրագրի ինտերֆեյսի փոփոխություններ ըստ հետևյալ հերթականության՝</p> <p>a. բացել հետևյալ գործիքների խմբերը՝ Render, Dimension, Properties, Shade, Insert, Zoom, View, Surface, Solids, Reference:</p> <p>b. AutoCAD ծրագրի պատուհանի վերևի մասում, հորիզոնական տեղավորված գործիքների շարքում տեղավորել նաև հետևյալ գործիքների խմբերը՝ Render, Shade, Insert:</p> <p>c. AutoCAD ծրագրի պատուհանի ձախ մասում, ուղղահայաց տեղավորված գործիքների հետ տեղավորել նաև հետևյալ գործիքների խմբերը՝ Surface, Reference:</p> <p>d. AutoCAD ծրագրի պատուհանի աջ մասում, ուղղահայաց տեղավորված գործիքների հետ տեղավորել նաև Dimension գործիքների խումբը:</p> <p>e. AutoCAD ծրագրի պատուհանի ներքևի մասում, անմիջապես Հրամանների պատուհանի վերևում տեղավորել նաև View և Solids գործիքների խմբերը:</p> <p>f. Zoom գործիքների խումբը տեղափոխել AutoCAD-ի Աշխատանքային դաշտի ներքևի աջ անկյունը, առանց միավորելու պատուհանի աջ կողմում և ներքևի մասում տեղավորված գործիքների խմբերի հետ և ֆիքսել նրա դիրքը</p> <p>g. Թաքցնել բոլոր նորաբաց գործիքների խմբերը՝ Render, Dimension, Properties, Shade, Insert, Zoom, View, Surface, Solids, Reference:</p> <p>4. Ուսանողին հանձնարարվում է բացել AutoCAD ծրագիրը և բացել My Documents դարակում գտնվող նախօրոք պատրաստված նախագիծը: Այնուհետև ուսանողը պետք է բացի View և Solid գործիքների խմբերը, պատուհանի մեջ իր հայեցողությամբ դասակարգի դրանք և փակի նախագիծը:</p> <p>5. Ուսանողին հանձնարարվում է բացել AutoCAD ծրագիրը, My Documents դարակի մեջ պահպանել դատարկ նախագիծը *.dwg ֆորմատով, տալով նրան Project001 անվանումը և փակել AutoCAD ծրագիրը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> – անհատական հանձնարարությունների միջոցով զարգացնել ծրագրից օգտվելու կարողություններն ու հմտությունները, – հետևել համակարգչի տեխնիկական վիճակին և ինֆորմացիոն պատուհանների բովանդակությանը: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ճիշտ է պատասխանում տրված հարցերին և անթերի կատարում է դասախոսի հանձնարարությունը (թվարկված առաջադրանքներից որևէ մեկը): Սխալներ և շեղումներ չեն թույլատրվում:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է խառը տիպի պարապմունքների, անհատական հանձնարարությունների միջոցով: Թույլատրվում են խմբային պարապմունքներ 2-3 ուսանողներից բաղկացած խմբերով: Անհրաժեշտ է ունենալ կահավորված</p>

	համակարգչային առնվազն 2 դասարան, գրականություն, օնլայն ռեժիմով տեղեկատվական աղբյուրներ, ուսումնազննական պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	10 ժամ Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական պարապմունք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Կարողանալ մասշտաբավորել պատկերը, օգտագործել կուրսորի ռեժիմները, մկնիկով կատարել տարրական գործողություններ, նախապատրաստել աշխատանքային դաշտը, օգտագործել Draw խմբի Line, Polyline, Construction line գործիքները, աշխատել միաժամանակ մի քանի փաստաթղթերի հետ
Կատարման չափանիշներ	ա. մասշտաբավորել պատկերը բ. օգտագործել կուրսորի ռեժիմները գ. մկնիկով կատարել տարրական գործողություններ դ. նախապատրաստել աշխատանքային դաշտը ե. Draw գործիքների խմբի տարրական օգտագործում
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և կոնկրետ առաջադրանքների կատարման արդյունքների հիման վրա: Այդ առաջադրանքները կարող են լինել նշված շարքից. <ul style="list-style-type: none"> ▪ մասշտաբավորել պատկերը. <ul style="list-style-type: none"> ○ մկնիկի պտուտակով կատարել տարրական մասշտաբավորում (պատկերի խոշորացում և փոքրացում) ○ Zoom Windows գործիքով <i>խոշորացնել</i> պատկերը ըստ նշված շրջանակի ○ Zoom Dynamic գործիքով <i>խոշորացնել</i> գծագրային տարածքի անհրաժեշտ մասը ○ Zoom Scale գործիքով <i>խոշորացնել</i> կամ <i>փոքրացնել</i> պատկերի մասշտաբը ճշգրիտ չափով ○ Zoom Center գործիքով <i>խոշորացնել</i> կամ <i>փոքրացնել</i> մասշտաբը ըստ ընտրված կենտրոնի ու չափի ○ Zoom Object գործիքով ստանալ ընտրված օբյեկտի մաքսիմալ հնարավոր մասշտաբը աշխատանքային դաշտում ○ Zoom In և Zoom Out գործիքներով խոշորացնել կամ փոքրացնել պատկերի մասշտաբը ○ Zoom All գործիքով ստանալ ամբողջ աշխատանքային դաշտի պատկերը ○ Zoom Extents գործիքով մասշտաբավորել աշխատանքային դաշտը բոլոր օբյեկտները ցուցադրելու համար ○ Zoom Realtime գործիքով և մկնիկի ձախ կոճակով խոշորացնել կամ փոքրացնել պատկերի մասշտաբը ○ Zoom Previous գործիքով վերականգնել նախկին մասշտաբը կամ պատկերի երևալու նախկին ձևը ▪ օգտագործել կուրսորի ռեժիմները. <ul style="list-style-type: none"> ○ ստանդարտ ռեժիմ ○ կետի (կորդինատի) ընտրման ռեժիմ ○ օբյեկտի ընտրման ռեժիմ ○ ընտրված կետի դիրքի անունով ռեժիմ ○ վեկտորի հետապնդման ռեժիմ ▪ մկնիկով կատարել հետևյալ տարրական գործողությունները. <ul style="list-style-type: none"> ○ Pan գործիքով փոփոխել տեսադաշտը ○ կատարել օբյեկտների վիզուալ ակտիվացում (highlight) ○ օբյեկտների ընտրման «ձախից աջ» ռեժիմ ○ օբյեկտների ընտրման «աջից ձախ» ռեժիմ ▪ նախապատրաստել աշխատանքային դաշտը.

	<ul style="list-style-type: none"> ○ մենյուի Format\Units... հրամանով ընտրել չափման միավորը և տասնորդական նիշերի աստիճանը ○ մենյուի Format\Drawing Limits հրամանով ընտրել աշխատանքային դաշտի չափերը <ul style="list-style-type: none"> ▪ Draw գործիքների խմբի տարրական օգտագործում. ○ հատվածի գծագրում Line գործիքով ○ բեկյալի գծագրում Polyline գործիքով ○ ուղիղների կառուցում Construction Line գործիքով ○ ուղղանկյան կամ քառակուսու կառուցում Rectangle գործիքով <ul style="list-style-type: none"> ▪ կարողանալ միաժամանակ օգտագործել AUTOCAD ծրագրի մի քանի նախագծեր. <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> – սիստեմատիկ, անհատական պարապմունքների միջոցով կատարելագործել համակարգչից օգտվելու տեխնիկան, – դասարանում պահպանել աշխատանքային կարգապահություն: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ճիշտ է պատասխանում տրված հարցերին և գործնական առաջադրանքը կատարում է անսխալ: Շեղումներ չեն թույլատրվում:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է խառը տիպի պարապմունքների, անհատական հանձնարարությունների միջոցով: Թույլատրվում են խմբային պարապմունքներ 2-3 ուսանողներից բաղկացած խմբերով: Անհրաժեշտ է ունենալ կահավորված համակարգչային առնվազն 2 լսարան, գրականություն, օնլայն ռեժիմով տեղեկատվական աղբյուրներ, ուսումնազննական պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	10 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ընտրել օբյեկտը մկնիկով, բռնակների միջոցով կատարել օբյեկտի տեղափոխում, պտույտ և չափերի փոփոխում: Օգտագործել կատարված գործողությունների ցանկը:
Կատարման չափանիշներ	ա. ընտրել օբյեկտը մկնիկով բ. բռնակների օգնությամբ տեղափոխել օբյեկտը գ. բռնակների օգնությամբ պտտել օբյեկտը դ. բռնակների օգնությամբ փոխել օբյեկտի չափերը
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին տրվում է առաջադրանք՝ տեղափոխել օբյեկտը, պտտել կամ փոխել չափերը: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. – սիստեմատիկ պարապմունքների միջոցով կատարելագործել համակարգչից օգտվելու տեխնիկան: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ճիշտ է պատասխանում տրված հարցերին և գործնական առաջադրանքը կատարում է անսխալ: Շեղումներ չեն թույլատրվում:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համակարգիչների ներքին ցանց, համակարգիչներ՝ ապահովված համապատասխան ծրագրերով, մեթոդական գրականություն, ուսումնազննական պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	8 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Կարգավորել պատկերի չափերը, օգտագործել մասշտաբավորման գործակիցները, օգտագործել Auto CAD-ի

	աշխատանքային DRID, SNAP, POLAR ուղղորդման ռեժիմները, օգտագործել TRIM հրամանը:
Կատարման չափանիշներ	ա. կարգավորել պատկերի չափերը կոնկրետ չափերի մուտքագրումով, բ. փոփոխել օբյեկտի չափերը մասշտաբավորման Scale գործիքի օգնությամբ գ. կիրառել ուղղորդման ռեժիմները դ. կիրառել TRIM հրամանը
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և անհատական առաջադրանքի կատարման արդյունքի հիման վրա: Առաջադրանքի թեման՝ կարգավորել աշխատանքային դաշտը, օգտագործել Grid և Snap ռեժիմները: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ինքնուրույն կատարում է առաջադրանքը և ճիշտ է պատասխանում հարցերին: Շեղումներ չեն թույլատրվում:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համակարգիչների ներքին ցանց, համակարգիչներ՝ ապահովված համապատասխան ծրագրերով, մեթոդական գրականություն, ուսումնազննական պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	14 ժամ Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական պարապմունք՝ 10 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Ստեղծել շերտեր, տեղավորել օբյեկտը շերտի մեջ, կատարել գործողություններ շերտերի հետ, ընտրել գծի տեսակը շերտի համար, ընտրել գծի տեսակը օբյեկտի համար, փոխել գծի մասշտաբը:
Կատարման չափանիշներ	ա. ստեղծել նոր շերտ New layer հրամանով բ. օգտագործել և փոխել շերտի բնութագրիչ հատկությունները layer settings պատուհանով գ. տեղադրել նոր օբյեկտներ շերտի մեջ դ. կատարել ընդհանուր գործողություններ շերտերի հետ:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է կոնկրետ հանձնարարության արդյունքի հիման վրա: Ուսանողին տրվում է որևէ պատկերի նախնական էսքիզ կատարելու առաջադրանք. Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. – ուսումնասիրել AutoCAD-ի հրամանները և փորձել կիրառել որևէ աշխատանքի մեջ, – շերտերի ստեղծումը, շերտերի մեջ պատկերների տեղադրում, – կատարելագործել համակարգչից օգտվելու տեխնիկան: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա կարողանում է կատարել տրված պատկերի նախնական էսքիզը, ճիշտ է օգտագործում գործիքները և հրամանները, հարցերին տալիս է ճիշտ պատասխաններ: Սխալներ և շեղումներ չեն թույլատրվում:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համակարգիչների ներքին ցանց, համակարգիչներ՝ ապահովված համապատասխան ծրագրերով, մեթոդական գրականություն, ուսումնազննական պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	12 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 10 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱԳՈՒՍՏԻ ՀԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ՀՄՆ -5-12-025
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը մշակվել է ուսանողներին համակարգչային ծրագրերի հիման վրա հագուստի նախագծում կատարելու

	հմտություններ տալու նպատակով:
Մոդուլի տևողությունը	54 ժամ Տեսական ուսուցում՝ 14 ժամ Գործնական պարապմունք՝ 40 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՀՄՆ-5-12-024 «AUTOCAD» մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. կարողանա ստեղծել արխիվներ և թվայնացնել լեկալները, 2. կարողանա կատարել արդյունքների թվայնացում 3. կարողանա աշխատել լեկալների հետ, ստանալ նոր լեկալներ 4. կարողանա կառուցել կարեր և կորեր, 5. իրականացնի չափ-հասակային բազմացում, 6. կատարի Marker-ի մեջ տվյալների ներածում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել համակարգչային նախագծման համակարգի սարքավորումները և դրանց նշանակությունը
Կատարման չափանիշներ	ա. գիտի ինչպես արխիվացնել տվյալները, տիրապետում է «Archives» պատուհանի հրահանգներին, բ. կարողանում է ստեղծել կանոնների արխիվ նշված հրահանգների «Create norms archive» հրամանի միջոցով, գ. գիտի ինչպես ստեղծել մոդելների արխիվ (Create model archive), դ. գիտի ինչպես ջնջել արխիվի ոչ պիտանի մասը «Delete norms archive» և «Delete model archive» հրամաններով, ե. կարողանում է փոխել կանոնների արխիվը նույն հրամանացանկի «Change the norms archive» հրամանով:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա: Առաջադրանքը վերաբերում է արխիվների ստեղծմանը և լեկալների թվայնացմանը: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. – ուսումնասիրել «Archives» հրամանացանկի հրամանները, – ծանոթանալ համակարգչային ծրագրում օգտագործվող տերմինների հետ: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ճիշտ է կատարել առաջադրանքը: Շեղումներ չեն թույլատրվում:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական, գործնական, լաբորատոր պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ներքին ցանցով համակարգչային լսարան, գործվածքի տեսականի, ուսումնազնական այլ պարագաներ, մեթոդական և ուսումնական գրականություն:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	8 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ըստ առաջադրանքի՝ հագուստի մասնիկի գծագիրը մուտքագրել համակարգիչ:
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է ստեղծել աշխատանքային տարածք մոդել ներմուծելու համար, բ. ճիշտ է ընտրում հենքի թելի ուղղությունը, գ. կարողանում է աշխատել հայելային արտացոլմամբ, դ. կարողանում է լեկալին ավելացնել նոր անցքեր և գծեր, ե. ճիշտ է ներմուծում լեկալի ինֆորմացիան (լեկալի տեքստը)

Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա: Առաջադրանքը վերաբերում է տվյալների ներմուծմանը համակարգիչ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> - նորմաների և մոդելների արխիվի ձևավորումը, - մուտքագրման հրամանացանկի հրամանների ուսումնասիրումը: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ճիշտ է պատասխանում հարցերի 80%-ին և անսխալ կատարում է առաջադրանքը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական, գործնական, լաբորատոր պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ներքին ցանցով համակարգչային դասարան, գործվածքի տեսականի, ուսումնազննական այլ պարագաներ, մեթոդական և ուսումնական գրականություն:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>12 ժամ Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական պարապմունք՝ 8 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	Մասնիկի մուտքագրված գծագրի վրա ըստ առաջադրանքի կատարի փոփոխություններ:
Կատարման չափանիշներ	<p>ա. կարողանում է գտնել համապատասխան լեկալը արխիվից «Pattern piece management» հրամանով</p> <p>բ. կարողանում է բացել և փակել լեկալները՝ «Open/Close» ֆունկցիաներ,</p> <p>գ. գիտի լեկալը կտրելու չորս եղանակները (կիսել, կտրել ցանկացած տեղից, կտրել նշված կարին զուգահեռ, կտրել նախկինում ստացված կարի միջոցով),</p> <p>դ. երկրաչափական պատկերների միջոցով (ուղիղ գիծ, շրջանակ, կետեր, զուգահեռ գծեր) կարողանում է ստանալ նոր լեկալներ և փոփոխել լեկալները,</p> <p>ե. կարողանում է լեկալի միջոցով ստանալ ծալքեր և սեղմոններ «Create revers» և «Create pleat» հրամաններով:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա: Առաջադրանքը վերաբերում է լեկալների հետ կատարվող աշխատանքին (բացել, փակել լեկալները, կտրել, ստանալ ծալքեր և սեղմոններ):</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> - ծանոթանալ երկրաչափական մարմինների ենթածրագրերի հետ, - ուսումնասիրել լեկալներին վերաբերող հրամանացանկի հրամանները: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա անսխալ կատարում է առաջադրանքը (շեղումներ չեն թույլատրվում):</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական, գործնական, լաբորատոր պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ներքին ցանցով համակարգչային դասարան, գործվածքի տեսականի, ուսումնազննական այլ պարագաներ, մեթոդական և ուսումնական գրականություն:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>12 ժամ Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական պարապմունք՝ 8 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 4	Մասնիկի գծագրի վրա ստանալ լեկալներ
Կատարման չափանիշներ	<p>ա. կարողանում է օգտվել «Seams» պատուհանի հրամաններից, մշակում է լեկալների եզրագծերը և «Check seam» հրամանով ստուգում է լեկալի համար սահմանված կարերի ճշտությունը,</p> <p>բ. «Curves» պատուհանի հրամաններով կարողանում է ստանալ նոր լեկալներ,</p>

	գ. գիտի ինչպես տեղափոխել կանոններով կետերը, դ. ճիշտ է կողմնորոշվում կանոնով և միջանկյալ կետերը ջնջելիս, ե. ճիշտ է որոշում հենքի թելի ուղղությունը (Grain lines):
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա: Առաջադրանքի թեման՝ մշակել լեկալների եզրագծերը, ստանալ նոր լեկալներ, տեղափոխել կանոններով կետերը, որոշել հենքի թելերի ուղղությունը: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. – ուսումնասիրել համապատասխան հրամանացանկի հրամանները: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա անսխալ կատարում է առաջադրանքը (շեղումներ չեն թույլատրվում):
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական, գործնական, լաբորատոր պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ներքին ցանցով համակարգչային դասարան, գործվածքի տեսականի, ուսումնագննական այլ պարագաներ, մեթոդական և ուսումնական գրականություն:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	10 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Կատարել լեկալների չափս-հասակային բազմացում և ստանալ փոման գծագիրը:
Կատարման չափանիշներ	ա. Կարողանում է օգտվել «Pattern pieces» և «Rules» հրամանացանկերի հրամաններից, գ. կարողանում է փոման ծրագրի «The style studio» ֆունկցիայի միջոցով կատարել լեկալների փոում, դ. ճիշտ է օգտագործում «File» հրամանացանկի հրամանները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա: Առաջադրանքը վերաբերում է լեկալների փոմանը: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. – կանոններով կետերի և միջանկյալ կետերի դասավորությունը, – փոման համար անհրաժեշտ կետերի ընտրումը: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ճիշտ է պատասխանում հարցերին և առաջադրանքը կատարել է անսխալ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական, գործնական, լաբորատոր պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ներքին ցանցով համակարգչային դասարան, գործվածքի տեսականի, ուսումնագննական այլ պարագաներ, մեթոդական և ուսումնական գրականություն:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	12 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 10 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱԳՈՒՍԻ ՈՃԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՀՄՆ -5-12-026
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել տարբեր դարաշրջանների ու ազգերի տարազում և մշակույթում տարատեսակ ոճերի առաջացման, զարգացման և փոխադարձ ազդեցության պատմական պրոցեսի ընկալման ունակություն, ինչպես նաև զարգացման տարբեր պատմական փուլերում հագուստի առանձնահատկությունները արտացոլող մարդու գեղագիտական իդեալի հիմնական գծերի ընկալման ունակություն:

Մոդուլի տևողությունը	36 ժամ Տեսական ուսուցում՝ 16 ժամ Գործնական պարապմունք՝ 20 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ձեռք բերի տարբեր դարաշրջանների ու ազգերի տարազում և մշակույթում ոճերի առաջացման, զարգացման և փոխադարձ ազդեցության պատմական պրոցեսի ընկալման ունակություն, 2. ընկալի կիրառական արվեստի հիմունքները, 3. ընկալի հագուստի պատմությունը՝ իբրև ժամանակակից պրոցեսների հիմք ու աղբյուր, 4. ընկալի զարգացման տարբեր պատմական փուլերում հագուստի առանձնահատկությունները արտացոլող մարդու գեղագիտական իդեալի հիմնական գծերը, 5. ճանաչի և տարբերի Բյուզանդիայի, Հնդկաստանի, Չինաստանի, Ճապոնիայի, միջին դարերի, անտիկ ժամանակշրջանի, ինչպես նաև ռոմանական ոճի (XI-XIIդդ.), գոթական ոճի (XIII-XIVդդ.) մշակույթն ու հագուստները, 6. իմանա Արևմտյան Եվրոպայի (այդ թվում և Վերածննդի դարաշրջանի (XV-XXդդ.)) XV-XXդդ. մշակույթն ու արվեստը ժամանակակից հագուստ ստեղծելու պրոցեսում օգտագործելու միտումով:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման կարգակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ձեռք բերել տարբեր դարաշրջանների ու ազգերի տարազում և մշակույթում ոճերի առաջացման, զարգացման և փոխադարձ ազդեցության պատմական պրոցեսի ընկալման ունակություն:
Կատարման չափանիշներ	Ուսանողը ընկալում է տարբեր դարաշրջանների ու ազգերի տարազում և մշակույթում ոճերի առաջացման, զարգացման և փոխադարձ ազդեցության պատմական պրոցեսը
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է ռեֆերատների վերլուծության հիման վրա: Ուսանողին տրվում է առաջադրանք «Տարբեր պատմական դարաշրջաններում ազգերի մշակույթում և տարազում հագուստի ոճերի փոխադարձ ազդեցությունը որպես պատմական անհրաժեշտություն» թեմայով: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. – հին աշխարհի արվեստն ու հանդերձը, – անտիկ շրջանի արվեստն ու հանդերձը, – ռոմանական ոճի արվեստն ու հանդերձը, – վերածննդի շրջանի արվեստն ու հանդերձը: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ռեֆերատներում ուսանողները կարողանում են հիմնավորել հագուստի ոճերի փոխազդեցությունը առնվազն հարևան ժողովուրդների մոտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ արվեստների պատմության դասագիրք, մասնագիտական գրականություն, իլյուստրացիոն ալբոմներ տարբեր ժողովուրդների ազգային տարազների վերաբերյալ: Կարելի է այցելել թանգարաններ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	6 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ընկալել կիրառական արվեստի հիմունքները;

Կատարման չափանիշներ	Ուսանողը ընկալում է կիրառական արվեստի հիմունքները
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին տրվելու են հարցեր կիրառական արվեստի հիմունքների վերաբերյալ և ռեֆերատ հազուստի զարգացման պատմության և ժամանակակից կիրառական արվեստների կապերի մասին: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. – տարբեր պատմական ժամանակաշրջանների արվեստի ու հազուստի ձևերի առաջացման պայմանները, – տարբեր շրջաններում մարդու էսթետիկ իդեալը բնութագրող գծեր, – տարբեր ժամանակաշրջանների արվեստի ոճի արտացոլումը հանդերձի մեջ: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա հիմնականում հարցերին պատասխանում է ճիշտ, իսկ ռեֆերատը արժանանում է գնահատողների հավանությանը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ արվեստների պատմության դասագիրք, մասնագիտական գրականություն, իլյուստրացիոն ալբոմներ տարբեր ժողովուրդների ազգային տարազների վերաբերյալ: Կարելի է այցելել թանգարաններ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	6 ժամ Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական պարապմունք՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ընկալել հազուստի պատմությունը՝ իբրև ժամանակակից պրոցեսների հիմք ու աղբյուր;
Կատարման չափանիշներ	Ուսանողը ընկալում է հազուստի պատմությունը իբրև ժամանակակից պրոցեսների հիմք ու աղբյուր
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է արդյունք 2-ի հետ միասին հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին տրվելու են հարցեր կիրառական արվեստի հիմունքների վերաբերյալ և ռեֆերատ հազուստի զարգացման պատմության և ժամանակակից կիրառական արվեստների կապերի մասին: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. – տարբեր պատմական ժամանակաշրջանների արվեստի ու հազուստի ձևերի առաջացման պայմանները, – տարբեր շրջաններում մարդու էսթետիկ իդեալը բնութագրող գծեր, – տարբեր ժամանակաշրջանների արվեստի ոճի արտացոլումը հանդերձի մեջ: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա հիմնականում հարցերին պատասխանում է ճիշտ, իսկ ռեֆերատը արժանանում է գնահատողների հավանությանը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ արվեստների պատմության դասագիրք, մասնագիտական գրականություն, իլյուստրացիոն ալբոմներ տարբեր ժողովուրդների ազգային տարազների վերաբերյալ: Կարելի է այցելել թանգարաններ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	7 ժամ Տեսական ուսուցում՝ 3 ժամ Գործնական պարապմունք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Ընկալել զարգացման տարբեր պատմական փուլերում հազուստի առանձնահատկությունները արտացոլող մարդու գեղագիտական իդեալի հիմնական գծերը;
Կատարման չափանիշներ	Ուսանողը ընկալում է զարգացման տարբեր պատմական փուլերում հազուստի առանձնահատկությունները արտացոլող մարդու գեղագիտական իդեալի հիմնական գծերը
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողին տրվում են հարցեր հազուստի առանձնահատկությունների միջոցով մարդու գեղագիտական ճաշակ ձևավորելու մասին:

	Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա կարողանում է հիմնավորել, որ մարդու գեղագիտական ճաշակի հիմնական գծերը արտահայտված են ժամանակաշրջանի հագուստների առանձնահատկություններում:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով, թանգարաններ այցելելով: Անհրաժեշտ է ունենալ բոլոր դարաշրջաններին վերաբերող ազգային տարազների պլքոմ, ինտերնետ կապով համակարգիչ, իլյուստրացիոն նյութերի հարուստ տեսականի:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	6 ժամ Տեսական ուսուցում՝ 3 ժամ Գործնական պարապմունք՝ 3 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Ճանաչել և տարբերել Բյուզանդիայի, Հնդկաստանի, Չինաստանի, Ճապոնիայի, միջին դարերի, անտիկ ժամանակաշրջանի, ինչպես նաև ռոմանական ոճի (XI-XIIդդ.), գոթական ոճի (XIII-XIVդդ.) մշակույթն ու հագուստները:
Կատարման չափանիշներ	Ուսանողը ճանաչում և տարբերում է Բյուզանդիայի, Հնդկաստանի, Չինաստանի, Ճապոնիայի, միջին դարերի, անտիկ ժամանակաշրջանի, ինչպես նաև ռոմանական ոճի (XI-XIIդդ.), գոթական ոճի (XIII-XIVդդ.) մշակույթն ու հագուստները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարականների միջոցով: Ուսանողին տրվում են հարցեր չափորոշչում նշված երկրների և դարաշրջանների պատմական առանձնահատկությունների մասին: Ուսանողին հանձնարարվում է կատարել էքզիզներ որոշակի թեմաներով (դասախոսի ընտրությամբ): Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա կարողանում է բնորոշել (հիմնական գծերով) Բյուզանդիայի, հեռավոր արևելյան ժողովուրդների, ինչպես նաև գոթական ոճի մշակույթն ու հանդերձները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով, թանգարաններ այցելելով: Անհրաժեշտ է ունենալ բոլոր դարաշրջաններին վերաբերող ազգային տրազների պլքոմ, ինտերնետ կապով համակարգիչ, իլյուստրացիոն նյութերի հարուստ տեսականի:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	5 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 3 ժամ
Ուսումնառության արդյունք 6	Իմանալ Արևմտյան Եվրոպայի (այդ թվում և Վերածննդի դարաշրջանի (XV-XXդդ.)) XV-XXդդ. մշակույթն ու արվեստը ժամանակակից հագուստ ստեղծելու պրոցեսում օգտագործելու միտումով
Կատարման չափանիշներ	Ուսանողը ծանոթ է Արևմտյան Եվրոպայի (այդ թվում՝ Վերածննդի դարաշրջանի (XV-XXդդ.)) XV-XXդդ. մշակույթին ու հագուստի զարգացման պատմությանը և ընկալում է ազդեցությունը ժամանակակից հագուստի զարգացման վրա:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարականների միջոցով: Ուսանողին հանձնարարվում է կատարել ժամանակակից էքզիզներ՝ օգտագործելով արևմտյան Եվրոպայի ժողովուրդների XV-XX դարերի ազգային տարազների բնորոշ էլեմենտներ: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ժամանակակից հագուստի էքզիզում կարողացել է արտացոլել նշված շրջաններին բնորոշ էլեմենտներ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով, թանգարաններ այցելելով: Անհրաժեշտ է ունենալ բոլոր դարաշրջաններին վերաբերող ազգային տարազների պլքոմ, ինտերնետ կապով համակարգիչ, իլյուստրացիոն նյութերի հարուստ տեսականի:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	6 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 4 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՀԱԳՈՒՍՏԻ ՄՈԴԵՆԱՎՈՐՈՒՄ ՄՈՒԼՅԱԺԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ»	

Մոդուլի դասիչը	ՀՄՆ -5-12-027
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը մշակվել է ուսանողների մոտ հագուստը մուլյաժային եղանակով մոդելավորելու հմտություններ ձևավորելու նպատակով
Մոդուլի տևողությունը	36 ժամ Տեսական ուսուցում՝ 6 ժամ Գործնական պարապմունք՝ 30 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՀՄՆ-5-12-009 «Հագուստի մոդելավորում և գեղարվեստական ձևավորում, ներածություն» մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. նախապատրաստի անհրաժեշտ նյութերը և գործիքները՝ մուլյաժային եղանակով հագուստը մոդելավորելու համար, 2. մակետային գործվածքից կարողանա մուլյաժային եղանակով ստանալ ընտրված հագուստի ձևվածքի առաջամասը և հետևամասը, 3. մուլյաժային եղանակով ստացված մակետից ստեղծի հագուստի ձևվածքի աշխատանքային լեկալներ:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Նախապատրաստել անհրաժեշտ նյութերը և գործիքները՝ մուլյաժային եղանակով հագուստը մոդելավորելու համար
Կատարման չափանիշներ	ա. մանեկենը ճիշտ է նախապատրաստված բ. մանեկենի վրա կոնստրուկտիվ գծերը ճիշտ են նշված գ. մուլյաժի համար նյութերը և գործիքները ճիշտ են ընտրված
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարականների միջոցով: Ուսանողին տրվում են հարցեր մուլյաժային եղանակով հագուստի մոդելավորման անհրաժեշտության և առանձնահատկությունների վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. – բարդ ձևվածքով հագուստների մոդելավորումը մուլյաժային եղանակով, – աշխատանքային լեկալների կիրառման դժվարությունները, – ծալազարդերի արտահայտումը մանեկենի տարբերակում: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերի 80-90%-ին և նախապատրաստել է նյութերն ու գործիքները աշխատանքի համար:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների, մանեկենի վրա կատարած պրակտիկ աշխատանքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեծ քանակությամբ տարբեր նշանակության ասեղներ, քորոցներ, գործիքներ և նյութեր, մասնագիտական և տեղեկատվական գրականություն: Գործնական աշխատանքի դասերը պետք է անցկացնել կարի ուսումնաարտադրական լաբորատորիայում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	12 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 10 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Մակետային գործվածքից կարողանալ մուլյաժային եղանակով ստանալ ընտրված հագուստի ձևվածքի առաջամասը և հետևամասը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ պահպանելով հենքաթելի ուղղությունը՝ ամրացնում է մանեկենի վրա մակետային գործվածքը բ. ճիշտ է գտնում սեղմոնների չափը և տեղը

	գ. ճշտված են հազուստի ձևաձևի կողքի կարերի ուղղահայացները
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է ուսանողի կատարած գործնական աշխատանքի հիման վրա: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. – մակետային գործվածքի ավելորդ մասերի հասկացությունը, – թափոնների հարցի լուծումը: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ստացել է հազուստի առաջամասի և հետևամասի ձևվածքները՝ թափոնների մինիմալ քանակով (դասախոսի գնահատմամբ):
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով, որոնք պետք է անցկացնել մանեկենների վրա: Անհրաժեշտ է ունենալ մեկից ավելի թվով մանեկեններ, դերձակի աշխատանքի համար անհրաժեշտ աշխատանքային գործիքներ և պարագաներ: Թույլատրվում է տալ խմբային աշխատանք (2-3 ուսանողներից կազմված խմբով):
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	10 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Մույլաժային եղանակով ստացած մակետից ստեղծել հազուստի ձևաձևի աշխատանքային լեկալներ
Կատարման չափանիշներ	ա. հիմնական գծերը ճիշտ է նշել, բ. անհրաժեշտ նշումները ճիշտ է կատարել, գ. լեկալների հիմնական ուրվագծերը ճշտված են, դ. աշխատանքը կատարելու համար նյութերը ճիշտ է ընտրել:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է ուսանողի կատարած գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին տրվում են հարցեր կատարած գործողությունները հիմնավորելու և աշխատանքը ուղղորդելու նպատակով: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. – վերհիշել նախորդ մոդուլների ժամանակ սովորած լեկալների պատրաստման մանրամասները, – կատարել լեկալների ուրվագծերի ճշտումը՝ համաձայն մակետային գործվածքի վրա նշված կոնստրուկտիվ գծերի: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա կարողանում է ստեղծել աշխատանքային դետալները՝ առանց էական թերությունների (դասախոսի օգնությամբ):
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով, որոնք պետք է անցկացնել մանեկենների վրա: Անհրաժեշտ է ունենալ մեկից ավելի թվով մանեկեններ, դերձակի աշխատանքի համար անհրաժեշտ աշխատանքային գործիքներ և պարագաներ: Թույլատրվում է տալ խմբային աշխատանք (2-3 ուսանողներից կազմված խմբով):
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	10 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 12 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՈՐԾՎԱԾՔԻ ԶԱՐԴԱՐԱՐԱԿԱՆ ՆԱԽՇԱՊԱՏՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ՀՄՆ-5-12-028
Մոդուլի նպատակը	Ուսանողի մոտ զարգացնել տարբեր գործվածքների վրա նկարով նախշապատման հմտություններ՝ կիրառելով աշխատանքի կատարման բազմազան տեխնիկաներ, դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշներ ստեղծելու համար:
Մոդուլի տևողությունը	18 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 16 ժամ

Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ ուսանողը պետք է ուսումնասիրած լինի <<Նյութագիտություն (Հագուստի նյութեր)>> և <<Հագուստի մոդելավորում և գեղարվեստական ձևավորում. Ներածություն>> մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. իմանա նախշապատ գործվածքների կիրառության շրջանակը և նշանակությունը կենցաղում և նորաձևության մեջ, 2. իմանա միմյանց համապատասխան գործվածքների և ներկերի կիրառումը, 3. կատարի զարդարարական նախշապատման պատկերի փոխադրում գործվածքի վրա, 4. կարողանա կատարել գործվածքի նախշապատում՝ տարբեր տեխնիկաներով, 5. կարողանա կատարել նախշապատված գործվածքի վերջնահարդարում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ նախշապատ գործվածքների կիրառության շրջանակը և նշանակությունը կենցաղում և նորաձևության մեջ:
Կատարման չափանիշներ	Գիտի կիրառական արվեստի տեսակները և ճիշտ է ներկայացնում նորաձևության մեջ օգտագործվող նախշապատումների տեսակները
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և ուսանողի կատարած գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին տրվող հարցերը վերաբերում են նախշազարդման արվեստի և նախշազարդված գործվածքների կիրառմանը: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. – կատարել նախշապատման կոմպոզիցիաներ գծային, բուսական, կենդանական և այլ նշանաբաններով, – կտորի ստացված ռապորտը օգտագործել մոդելավորման մեջ: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա պատկերացնում է նախշազարդված գործվածքների կիրառման հարկը կենցաղում և մոդելավորման մեջ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է խառը տիպի պարապմունքների միջոցով (տեսական, գործնական, լաբորատոր և պրակտիկ): Պահանջվում է տալ տնային ընդարձակ հանձնարարություններ և սիստեմատիկ հետևել նրանց կատարմանը: Անհրաժեշտ է ունենալ կահավորված ուսումնարարական արհեստանոց և համակարգիչներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	5 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 3 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ միմյանց համապատասխան գործվածքների և ներկերի կիրառումը:
Կատարման չափանիշներ	Տարբերակում է. ա. գործվածքների առանձնահատկությունները, բ. կիրառվող ներկերի առանձնահատկությունները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է ուսանողի կատարած գործնական աշխատանքի հիման վրա: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. – նկարչական նյութերի օգնությամբ ստանալ գործվածքի էֆեկտը, – նախշազարդը փոխանցել գործվածքին բատիկ եղանակով, – նախշազարդը և կոմպոզիցիաները ստանալ համակարգչային ծրագրերի միջոցով: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա կատարում է աշխատանքը՝ առանց էական թերությունների (դասախոսի գնահատմամբ):
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է խառը տիպի պարապմունքների միջոցով (տեսական, գործնական, լաբորատոր և պրակտիկ): Պահանջվում է տալ տնային ընդարձակ հանձնարարություններ և սիստեմատիկ հետևել նրանց կատարմանը:

	Անհրաժեշտ է ունենալ կահավորված ուսումնաարտադրական արհեստանոց և համակարգիչներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	4 ժամ Տեսական ուսուցում՝ 0 ժամ Գործնական պարապմունք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Կատարել զարդարարական նախշապատման պատկերի փոխադրում գործվածքի վրա
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ամրացնում գործվածքը շրջանակին, բ. ճիշտ է փոխանցում նախշը գործվածքի վրա (անհրաժեշտության դեպքում տրաֆարետի միջոցով):
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է արդյունք 2-ի հետ միասին, ուսանողի կատարած գործնական աշխատանքի հիման վրա: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. – նկարչական նյութերի օգնությամբ ստանալ գործվածքի էֆեկտը, – նախշազարդը փոխանցել գործվածքին բատիկ եղանակով, – նախշազարդը և կոմպոզիցիաները ստանալ համակարգչային ծրագրերի միջոցով: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա կատարում է աշխատանքը՝ առանց էական թերությունների (դասախոսի գնահատմամբ):
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է խառը տիպի պարապմունքների միջոցով (տեսական, գործնական, լաբորատոր և պրակտիկ): Պահանջվում է տալ տնային ընդարձակ հանձնարարություններ և սիստեմատիկ հետևել նրանց կատարմանը: Անհրաժեշտ է ունենալ կահավորված ուսումնաարտադրական արհեստանոց և համակարգիչներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	3 ժամ Տեսական ուսուցում՝ 0 ժամ Գործնական պարապմունք՝ 3 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Կարողանալ կատարել գործվածքի նախշապատում՝ տարբեր տեխնիկաներով
Կատարման չափանիշներ	ա. տիրապետում է աշխատանքի կատարման տեխնիկային բ. ճիշտ է պահպանում գունային համադրությունները գ. ցուցաբերում է ստեղծագործական մոտեցում
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է ուսանողի կատարած գործնական աշխատանքի հիման վրա: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. – նախշապատում ասեղնագործությամբ, – նախշապատում հեյլոնագործությամբ, – նախշապատում ապլիկացիաներով: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ներկայացնում է ստեղծագործական տարրերով ավարտուն աշխատանք:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է խառը տիպի պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բավարար քանակի նյութեր և գործվածքների նմուշներ: Կարելի է կատարել խմբային աշխատանքներ՝ 2-3 ուսանողների մասնակցությամբ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	4 ժամ Տեսական ուսուցում՝ 0 ժամ Գործնական պարապմունք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Կարողանալ կատարել նախշապատված գործվածքի վերջնահարդարում
Կատարման չափանիշներ	ա. եզրակարում է նախշապատկերը գործվածքի վրա բ. արդուկով հարթեցնում է եզրագծերը

Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է ուսանողի կատարած գործնական աշխատանքի հիման վրա:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> - ջերմախոնավային սարքավորումների օգտագործման անվտանգությունը, - նախշապատված գործվածքների հարդարման ժամանակ առաջացող դեֆեկտները: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա առանց թերությունների կարողանում է արդուկի միջոցով հարդարել նմուշը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է խառը տիպի պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ կարի գործող ուսումնասիրտադրական արհեստանոց և աշխատանքները կատարել դասախոսի կամ արտադրական ուսուցման վարպետի ներկայությամբ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>2 ժամ Տեսական ուսուցում՝ 0 ժամ Գործնական պարապմունք՝ 2 ժամ</p>